

ՔԱՆԱԲԵՐ

Հոգեւոր Աստուծոյ Աստուծոյ ՀԱՄԱՐ
"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(Թ. Տարի) ԴԵԿՏԵՄԲԵՐ 1933

(9^{me} Année) Décembre 1933

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

«Բանբեր» ընտանիքին

Փրկչին Ծնունդը

Խմբ. «Բանբեր»-ի

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Կորուսած ուրախութիւնը...

Միայն վայրկեան մը առաջ

Առաւել աւել ճամբան

Բ. Գ. Եարտմեան

Թարգ. Վեր. Յ. Եղիազարեան

Կենաց ածուներէն

Տէր Յիսուս Բրիտանիոյ կը սիրէս

Երկու արեւներ

Սերտողութիւն

Անապատի խորանը՝ Բրիտանիոյ օրինակ

Կենդանական

Առաջ Մօնո

Հազարոս եղբայր Մարտիեան

X X X

Գ. Պ. Պարսամեան

Մանկանց սրնակ

Հաւատքին Ծնունդը

Յանկ նիւթոց

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանաւանդին մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Ռուսերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն ռուսը), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԱՆԵԱՆ

Ռուսերէնը ունի 8 էջ ո՛ր թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիրութիւն կուտայ որ Ռուսերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Ռուսերէն մասի պատասխան
նստու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Ռուսերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:



ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԲԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԲԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆի, իսկ ղրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆի անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցեով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

ԲԱՆԲԵՐ

Արթուրի'ր դուն
որ կը յնամա, եւ
կունգնէ մեռնին
բէն, ու Բրիտան
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Ե. 14



Յարեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մանկու խոստմունքէն որ մեզի մ'նացեր է,
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ առ-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի շուշանայ:

Երբ. Ժ. 37

Թ. ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1955

ԹԻԻ 12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԱՆԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Այս թիւով կը վերջանայ Բանբերի թ. տա-
րեւը: Անկէ ինչ տարիներ շարունակաբար
հնչած է Աւետարանի քաղցր ձայնը եւ ջանա-
ցած է հեռուն ու մօտը պահուող հայախօս եւ
թրքախօս ազգայիններու, մեծին ու պզտիկին
օգտակար ըլլալ:

Գոհունակութեամբ յետադարձ ահաբեկ մը
կը նետենք եւ կրնանք վկայել եւ վկայութիւն-
ներ ընդունած ենք հեղինակաւոր անձերէ թէ,
Բանբեր տարիներու ընթացքին հետզհետէ աւելի
խորացած եւ աւելի մատչելի եղած է ամէն
դասակարգի անձերու, հաւատացեալներու եւ
անապաշխարներու:

Ինչպէս թերթիս կողքին երկրորդ էջին վը-
րայ արձանագրած ենք, մեր գործունէութեան
առաջին դաշտն է Յրանտա, բայց նաեւ պար-
տականութիւն կ'զգանք ծառայել օտար երկիր-
ներու մէջ բնակող ազգայիններու ալ, քանզի
կը հաւատանք թէ այն տեղերն ալ կան հա-
ւատացեալներ որոնք քաջալերութեան եւ հա-
տատուելու պէտք ունին: Անոնց վկայութիւննե-
րով ալ քաջալերուելու ենք մենք, ինչպէս անոնք
մերինովը: Այսպէս, հայ հաւատացեալներու մի-
ջեւ յարաբերութեան եւ սիրոյ միութեան մը
ազդակներէն մին ըլլալու է Բանբերը, ինչպէս
մատամբ ալ եղած է արդէն: Ուրիշ երկիրներու
մէջ կը դառնան նաեւ անապաշխարներ, որոնք
թերեւս իրենց բեմերէն կը լսեն Աստուծոյ փր-
կարար խօսքը, զորոնք կը հաստատէ նաեւ Բան-
բեր իր վկայութեամբ: Կան սակայն տեղեր ալ,
ուր միայն ինքն է փրկութեան Աւետարանին
փողը հնչեցնողը, անապատին մէջ կանչող ձայ-
նին պէս, եւ ուստի որքա՞ն մեծ քաջ մը լիցնե-
լու կանչուած է նա:

Կը խնդրենք Բանբերի բոլոր ընթերցողնե-
րէն կրկին հռանդով աղօթելու անոր խմբագ-
րական մարմինին եւ բոլոր գործակիցներուն հա-

մար, որպէսզի իւրաքանչիւր թուոյ համար պատ-
րաստուած նիւթերը հոգիներու մատչելի ըլլան
եւ մատակարարուն յարմարագոյն կերպով ի
նպաստ հոգիներու խորացման: Աղօթենք նաեւ
իրարու համար, որպէսզի այդ նիւթերը թարմ-
րէն խօսին մեզի ու օրհնուինք առատապէս:

Բանբերի անցնող տարեւը շնորհիւ մէջ Ամե-
րիկայի մեր սիրելի բաժանորդներէն մեծ մաս
մը իրենց բաժնեգիրները ուշ զրկեցին: Այս
յապագումը իրենց համար տարբերութիւն մը
չըրաւ թէն, բայց տօլարի անկման պատճա-
ռաւ Բանբեր տուեց 2500 Փրանք: Այս փեսաը
դարմանելու եւ Բանբերը նոր տարին պարտքով
թեւակոխած չտեսնելու համար Յրանտահայ ե-
կեղեցիներ իրենց ծանրաբեռնուած լուծին վրայ
նոր ծանրութիւն մըն ալ աւանիլ ստիպուեցան:

Այս պատճառաւ յատկապէս եւ կրկին պի-
տի խնդրէինք մեր սիրելի բարեկամներէն, որ-
պէսզի մեզի զրկէին իրենց բաժնեգիրն առաջին
պատեհութեամբ երբ անոնք ստանան 1954 տար-
ուան Յունուարի թիւը: Կանխաւ շնորհակալու-
թիւն կը յայտնենք մեր սիրելի ճշդապահ եւ
կարգապահ ընթերցողներուն: Պզտիկ բաներու
մէջ զանցառութիւնը մեծի կ'առաջնորդէ եւ պըզ-
տիկ բաներու մէջ հաւատարիմ եղողներն են զո-
րոնք ճշրը մեծ բաներու վրայ պիտի կեցնէ: Պըզ-
տիկ կէտին մէջ հաւատալիմ եւ ճշդապահ ըլլանք:

Յառաջիկայ տարի Բանբերի բաժնեգիրն ֆը-
րանքի հաշուով նոյնը պիտի մնայ: Քանի որ առ-
այժմ տօլարը հաստատուն գետին մը գտած չէ,
պիտի խնդրէինք Ամերիկայի բաժանորդներէն
երթալ իրենց մօտակայ նամակատունը եւ հոն
Հայերէնի համար 20 Փրանքի, իսկ Հայերէնի եւ
թուրքերէնի համար 27 Փրանքի մինչ օրուր
մը զրկել տալ, վճարելով անոր համարժէք
տօլար: Մեզի նոյնքան սիրելի է, եթէ քանի մը
հոգի միաբանած մէկ անգամէն զրկէին իրենց

առթիւնը բերի ձեզի, ա՛լ ազատ էք: Եկէք ողջունելու ձեր Փրկիչը, որ ո՛չ միայն ձեր փափաքած ազատ կեանքը շնորհեց ձեզի, հապա նաեւ քաղցր հայրենիքը պիտի առաջնորդէ զձեզ»: ...Ա՛հ, զերի ըլլալ եւ ազատութի՛ւն, ասոր նշանակութիւնն ու արժէքը միայն այդ վիճակէն անցնող մը կրնայ հասկնալ:

Գերիներու վիճակը ճշմարիտ մանրանկարն է մեղքի գերեաց պատկերին, այս պատճառաւ մե՛ծ է Փրկչին ծննդեան արժէքը:

Ինչպէս հրեշտակը Հոովմէական լուծին տակ հեծող ազգի մը փրկութեան համար գիշերուան ազօթքի պահեր անցնող Բեթլէհէմի հովիւներուն ըսաւ, «Ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ եւ զանոնք նոր յուսով մը լեցուց, նոյն պատգամը նա կը հնչեցնէ նաեւ մեղքի գերութեան տակ տառապող բոլոր մարդկութեան: Փրկիչ մը ծնաւ: Փրկչին զաւուսար երաշխիքն է մեղքին պարտութեան, Էրկրի վրայ խաղաղութեան հաստատութիւն եւ մարդոց մէջ հաճութեան: Փրկիչը եկաւ աշխարհ, մարդոց հետ բնակելու, քանզի Անոր անունը խնամուէլ է: Յայտնապէս մե՛ծ է Աստուածապաշտութեան խորհուրդը, Աստուած մարմնով յայտնուեցաւ եւ փրկութիւնը փատարեց բուն իսկ Իր ձեռքով եւ Իր մարմնին մէջ:

Արդ, վստահութիւն ունինք սիրելի ընթերցող, թէ Փրկչին յայտնութիւնով դուն ու ես, մեղաւորներս, հաւատքով գերութեան ամենօրեայ յակամայն ծառայութիւնէն ազատուած ենք: Մեր Փրկիչը, մեղքին թշնամին, զայն յաղթահարողն է եւ մեր ալ յաղթութիւնը ապահոված է: Ան ազատեց հաւատացողը գերութենէ, լուաց դայն իր անօրէնութենէն, ընդունեց Իր փարախին մէջ, Աստուծոյ որդի ըլլալու իշխանութիւնը հազցուց անոր, զանիկա կը պահէ, անոր մէջ կը բնակի եւ անիկա ալ Իր մէջ եւ անոր յաղթութիւն կուտայ մեղքին վրայ: Այս պատճառաւ Պօղոս Առաքեալ կ'աղապակէ, «Գոհութիւն Աստուծոյ որ մեղի ամէն ատեն յաղթութիւն կուտայ...

Օ՛, ինչ քաղցր է գիտնալ թէ Յիսուսով ո՛չ միայն փրկուած ենք մեղքէն, հապա ազատուած ենք մեղքի անէծքէն, Յիսուսի մէջ պահուած, եւ յաղթական ենք Անով: Ծննդեան տօնին առթիւ ով հաւատացեալ, անգամ մըն ալ մտաբերէ քու սքանչելի յոյսդ եւ պոչէ լիաթոք, Օրհնեա՛լ է Աստուածապաշտութիւնն «Քրիստոսի»:

Իսկ դուն, ով մեղաւոր, Փրկչին ծննդեան լուսով ներշնչուած, մօտեցիր Անոր մասերին, ձգէ քու չար սիրտդ Անոր եւ լուացուած սիրտ մը ընդունած փառք տուր Աստուծոյ եւ ծնած Փրկչին:

ՀՈԳ. ԿԵԼԵՔ

ԿՈՐՍՈՒԱԾ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՉՕՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէ՞ս կրնանք վերստանալ

Dr. F. B. Mayer

Շատեր կ'ողբան թէ քրիստոնէական կեանքը նոր սկսած ատեն երկնային երջանկութեան օրեր կը վայելէին երկրի վրայ, սակայն շատ չանցած՝ կորսնցուցին ամէն ուրախութիւն եւ իրենց կեանքերը համակուեցան տրտմութեամբ եւ դառնութեամբ:

Այս խօսքերը գրուած են օգնելու բոլոր անոնց որ կը տենչան վերստանալ իրենց կորսնցուցած երջանկութիւնը: Քաջալերուեցէ՛ք, քանզի կարելի է ձեր կորսնցուցածը՝ եւ անկէ շա՛տ աւելին կրկին ձեռք բերել: Ճշմարիտ է թէ դուք ձեր թանկագին քարերը ծովը նետեցիք, որուն հետեւանքը եղաւ ջուրի ցայտում մը, վէտվէտում մը ու ձեր պատուական գանձին անհետանալը խոր անդունդին մէջ: զայն վերստանալ անկարելի կը թուի ձեզի, սակայն Քրիստոսի ծակուած ձեռքերը կարող են զանոնք կրկին դնել ձեք ափին մէջ, միայն թէ այս անգամ աւելի իմաստուն եղէք եւ թողէք որ Անիկա պահէ զանոնք ձեզի համար:

Ձեր կորսնցուցածը վերստանալու քայլերը հետեւեալներն են.—

Ա. վստահ եղիր թէ Աստուած սրտանց պիտի ողջունէ քու վերադարձը: Անիկա բարկացող դատաւոր մը չէ, ոչ ալ Իր յոյսը քեզմէ կտրած է եւ զքեզ սիրելի դադրած, հապա Անոր կարօտակէզ սիրտը կը բաբախէ քեզի համար: Մեր Փրկիչը կը նմանցնէ զԱյն սիրելի հօր մը որ պատուհանէն շարունակ կը հսկէ այն ճամբան, ուրկէ հեռացաւ իր մոլորեալ որդին: Անոր վերադարձը տեսնելու հրատենչ բաղձանքն ունի, պատրաստ է մինչեւ «շատ հեռուն» վազելով՝ զայն դիմաւորելու եւ իր ցնցոտիներովն ու աղտեղութեամբը Իր սրտատոջող կուրծքին վրայ սեղմելու: Ահաւասիկ քու Աստուածդ, սիրելի բարեկամ: Մտի՛կ ըրէ Անոր խօսքերուն՝ ընդմիջուած խոր հառաչներով, «Քեզ ինչպէ՞ս տամ, ո՛վ Եփրեմ, քեզ ի՞նչպէս յանձնեմ, ով Իսրայէլ, քեզ ինչպէ՞ս Աղմայի պէս ընեմ, քեզ ինչպէ՞ս Սեբուրիմի պէս դնեմ: Իմ սիրտս ներսիդիս կը խռովի, կարեկցութիւններս ալ միանգամայն կը խռովին»: Կարգա՛ Ովսեայ մարգարէս թեան վերջին

զլուխը, որ կրնայ յետագործին Աւետարանը կոչուի: Կարգա Երեմեայ երրորդ զլուխը, եւ թող Աստուծոյ դառնալու այն սրտածմլիկ աղերսանքը, թափանցէ հոգւոյդ ամէն մէկ մասին: Կարգա Պետրոսի անկումը եւ վերականգնումը եւ ջերմ ու յորդառատ արձնասուքներով ողորդէ Յովհ. ԻԱ. զլուխը՝ տեսնելով Տէրջը փափկանկատ թողութիւնը եւ մեծ փտահալթիւնը սրով իր դառնուկներն ու ոչխարները կը յանձնէ իր ինկած աշակերտին խնամքին: Թէպէտեւ ամէն մարդ ծանծրացած ըլլայ քու սխալներէդ ու մոլըներէդ, փտահ եղիւր թէ Աստուծոյ անսահման սէրը քեզի հանդէպ տակաւին սպառած է: Ան որ կը թելադրէ մեզի դէմ մեղանշող եղբոր մը 490 անգամ ներել, որչա՛փ աւելի ինք պիտի ներէ: Որչա՛փ որ երկինքը երկրէս բարձր է, այնքան մեծ է Անոր ողորմութիւնը մեզի հանդէպ: Վստահէ թէ սրտագին ընդունելութիւն մը պիտի գտնես Անոր քով:

Բ. փնտռէ, գտիր եւ խոստովանէ Աստուծոյ եւ քու միջեւ յառաջ եկած բաժանման պատճառը: Ճշմարիտ է թէ Աստուծոյ երեսին լոյսը ծածկուած է քեզմէ, սակայն ինչո՞ւ: Բու անօրէնութիւններդ ու մեղքերդ արեղակին առջեւ գտնուող ամպի մը պէս ծածկեր են Անոր պայծառ դէմքին լոյսը քու աչքերէդ: Մեղքերդ հատիկ հատիկ աչքէ անցուր: Մի ըսեր, Ով Տէր, ես մեծ մեղաւոր մըն եմ, ըրի՛ ինչ որ ընելու չէի, չըրի՛ ինչ որ ընելու էի, այլ ըսէ, Ով Տէր, այո, այդ եւ այն մեղքը գործեցի: Իւրաքանչիւր մեղք իր անունովը Տէրջը առջեւ դիր եւ Անկէ ընդունէ անոնց մահուան վճիռը: Խոստովանիլ կը նշանակէ անիծեալ մեղքերուդ տխուր պատմութիւնը Տէրջը ներկայացնել առանց զայն սրբազրեւելու կամ գեղեցկացնելու: Պատմէ Անոթ թէ ինչպէս յիշեալ մեղքը սկսաւ, ինչպէս թոյլ տուիր որ ան աճի, եւ ինչպէս վերջապէս այնքան ոտզի նստաւ քու վրայ:

Դ. Հաւատաւ Աստուծոյ անմիջական ներման: Ո՛րչափ Ժամանակ կ'առնէ որ քու գաւազնիդ ներեա, երբ անիկա ճշմարիտ գղջումով քեզմէ թողութիւն կը խնդրէ: Տարիներու մեղքեր կըրնան ներուիլ աչք գոցել բանալու արագութեամբ եւ արտասուքի կաթիլ մը վար զլորուելու տեսողութեամբ: Երբոր խոստովանինք մեր մեղքերը, Աստուած հաւատարիմ ու արդար է դանոնք ներելու: Աղօթքներ կան, որոնց այնքան շուտ չպատասխաներ, սակայն մեղքի թողութեան համար մատուցուած աղօթքի մը պատասխանը մէկ մանրերկրորդ անգամ չուշացներ:

Անառակ Որդին հապիւ թէ, «Շայր մեղանշեցի» թաթոված է, կայծակի արագութեամբ կուգայ անոր պատասխանը, «Բու մեղքերդ ջնջեցի, պիտի չմեռնիս»: Այն վայրկեանին որ յանցաւոր մը գղջմամբ կը մօտենայ Աստուծոյ գահին, Անոր արքունական թողութեան ոսկեղէն գաւազանը կ'երկարի մեղաւորին: Կրնայ ըլլալ թէ քեզի եկած թողութիւնը անմիջապէս չգրաս եւ հոգիդ չկրնայ ճիշդ այդ վայրկեանին ցնծութեամբ աղաղակ բարձրացնել, սակայն Աստուծոյ մաքին մէջ քու մեղքիդ հաշիւը փակուած է այլեւս: Անիկա մեղքը կ'ատէ, բայց զայն ջնջել կը սիրէ: Անիկա կը սիրէ մեղաւորը եւ ցնծամբ կ'ընդգրկէ զայն: Կրնայ անմիջապէս ներել, քանզի Տէր Յիսուս Քրիստոս մեր մեղքերը իր մարմինովը կրեց խաչափայտին վրայ:

Դ. Հրաժարէ նախկին մեղքերուդ պատճառներէն: Ճշմարիտ գղջմամբ Տէրջը դիմող մը կը ջանայ կրկին չմեղանշել: Անիկա աչքէ կ'անցնէ իր անցեալ կեանքը, կը գտնէ մեղքին պատճառը եւ կ'աշխատի բոլորովին հրաժարիլ անկէ: Եթէ իր մեղքին պատճառը բարեկամութիւն մըն էր, պատրաստ կ'ըլլայ խզելու այդ սերտ կապը, թէպէտեւ այնպէս ընել իր կեանքին կապը կտրել նշանակէ իրեն: Եթէ տեսակ մը դրօսանք էր, յաւիտեանապէս կը հեռանայ այն վայրէն: Եթէ դրամ շահելու շահաւոր միջոց մըն էր, կը նախընտրէ չոր հաց ուտել: Եթէ զխոտութիւն մը, կեանքի ասպարէզ մը կամ դիրք մըն էր՝ կը նախընտրէ ձեռքը, ոտքը, աչքը կտրանցնել քան Աստուծոյ հաճութիւնը որ յաւիտեանական կեանք է: Նոյնիսկ եթէ մեղքին պատճառը բան մըն էր զոր եկեղեցին կը թուլատրէր, բայց իրեն համար մեղք էր, անկէ կը հրաժարի: Եթէ չեա կրնար ստոյն վրայ քալել առանց սահելու, լաւագոյն է որ անոր վրայ ոտք չկոխես: Եթէ այսինչ կերակուրը չեա կրնար մարսել, աւելի լաւ է որ զայն բերանդ չդնես: Կրնայ ըլլալ որ քեզի անհնարին թուի ազատիլ զքեզ պատու կարգ մը ցանցերէ, սակայն յիշէ զԱյն որ Փարատիւ ըսաւ, «Թող Իմ ժողովուրդս»: Անիկա իր ժողովուրդին ճամբայ բացաւ. քեզի ալ պիտի բանայ, եթէ վստահութեամբ Իրեն յանձնուիս:

Ե. Պատրաստ եղիւ առնելու ամէն մէկ հրապարակային քայլ որ անխրաժեշտ է առնել: Բաւական չէ որ Աստուծոյ միայն խոստովանիս, այլ խոստովանելու ես նաեւ այն անձին որուն դէմ մեղանշած ես: Բու ընծադ սեղանին վրայ թող եւ գնա եղբորդ հետ հաշտուէ: Եթէ անոր

դէմ սխալ գործած եւ, զնաք եւ ըսէ. եթէ զայն խաբած եւ, վերադարձուր անոր ըրած գրկանքդ բան մըն ալ վրան աւելցնելով: Ըստ Ղեւստական օրէնքին՝ զողջեւածի կամ գրկանքի մը հատուցումը ընողը հինգերորդ մաս մը աւելցնելու էր իր վերադարձնելիքին վրայ որպէսզի կարող ըլլար իր զոհով քահանային մօտենալ ու թողութիւն գտնել: Այսօր ալ հետեւելու է այս սկզբունքին: Անկարելի է որ երջանիկ ըլլաւ որչափ ժամանակ որ պէտք եղած հատուցումը ըրած չեա: Անմիջապէս տես այն անձը զոր տեսնելու եւ, կամ գրէ այն նամակը զոր գրելու եւ: Եթէ այն անհատը զոր կողոպտած էիր՝ մեռած է, պէտք եղած հատուցումը ըրէ անոր ժառանգորդներուն կամ ներկայացուցիչներուն: Քու մեռած ուրախութիւնդ անկարելի է որ քեզի վերադառնայ եթէ յօժար չեա անոր գերեզմանին վրայէն այս քարը վերցնել: Եւ չեմ կրնար հաւատալ զղջման մը որ անցեալ գրկանքի մը համար կարելի եղած չափով հատուցում ընելու ազնուութիւնը չունի:

2. Մի անգամ ընդ միշտ Աստուծոյ նուիրէ քու ամբողջ սիրտը: Կրնայ ըլլալ թէ զայն անգամ մը Անոր տուած էիր, ոսկայն կրկին տուր: Եթէ ասկէ առաջ եբքեր տուած չէիր, հիմա տուր: Ծունկի եկուր եւ ինքզինքդ, կեանքդ, շահերդ եւ ամբողջ ունեցածդ Աստուծոյ յանձնէ: Ողջակէզը քեզանին վրայ դիր: Եթէ անկարող եւ ապու, Աստուծէ խնդրէ որ զայ եւ ինք տունէ: Ըսէ Իրեն թէ քու փափաքդ է միայն, միշտ եւ ամբողջովին Իրենն ըլլալ: Պիտի չհամարձակէինք մեր խնդածու կեանքը ափ մը թառամած տերեւներու նման՝ մեր փառաւորեալ Տէրոջը նուիրել, եթէ ինք որոշապէս խնդրած չըլլար որ մեր սիրտերը Իրեն տայինք: Զարմանալի է Անոր այս խնդիրքը, ոսկայն Անիկա անտարակոյս կարող է Իրեն նուիրուած անհատ մը վերածել Իրեն զործածելի անօթի մը, օգտակար շէնքի մը, Իր փառքը պարունակող ընդունարանի մը եւ Իր ճակատը զարգարող պսակի մը:

Է. վստայ եղիր Թէ Աստուծոյ կարող է զքեզ միշտ պահել: Անիկա կրնայ մեր սուքերը սահելէ պահպանել եւ պիտի պահպանէ ալ: Միայն թէ մեր աչքերը անընդհատ Անոր վրայ ըլլալով խնդրենք որ ինք մեզ բռնէ: Անիկա զքեզ երեք պիտի չթողու: Իր հրեշտակներուն պիտի պատուիրէ որ կեանքիդ բոլոր օրերուն մէջ քեզ պահպանեն: Իր փեսուներովը զքեզ պիտի ծածկէ եւ Անոր թեւերուն տակ պիտի ապաստանիս: Կրնայ Թէ փորձութեան ժաման կը մտն

նաս Անոր նայիլ: Ուրեմն խնդրէ Սուրբ Հոգիէն որ քեզի յիշեցնէ վտանգի պահուն Յիսուսի նայիլ: Անոր զործը ամէն բաները մեր միտքը բերել է: Ամէն առաւօտ ինքզինքդ Տէրոջը ձեռքերուն յանձնէ:

ՄԻԱՅՆ ՎԱՅՐԿԵԱՆ ՄԸ ԱՌԱՋ

(Ամսվերջի խորհրդածութիւն)

Աղամ եւ Դեւ եդեմի պարտէզին մէջ էին, Աստուած դուրս վռնաց գիրենք, Ծնդ. Գ. 23:

Կայէն իր եղբօր Աբելի կողքին Տէրոջը ընծայ կը մատուցանէր, բայց իր եղբայրը սպաննեց, Ծնդ. Գ. 3-8:

Ենովք երկրի վրայ Աստուծոյ հետ կը քայլէր, Աստուած առաւ զանիկա, Ծնդ. Ե. 24:

Նոյ տապանէն դուրս էր, ներս մտաւ, Ծնդ. Է. 7. տապանէն դուրս ելաւ, Բ. 18:

Աբրամ Ուր քաղաքին մէջ էր, զէպի Քանանու երկիրը ճամբայ ելաւ իր տունով Ծնդ. ԺԱ. 31:

Ղովա Սոգոմի մէջ էր, հրեշտակները հանեցին զայն ընտանեօք քաղաքէն դուրս, Ծնդ. ԺԹ. 16:

Խափակ իբրեւ զոյ կտրուած փայտերու վրայ էր, հայրը արձակեց զայն Ծնդ. ԻԲ. 9-14:

Խորայէլի անունը ցախը էր, Տէրոջմէ օրհնուելով Իսրայէլ կոչուեցաւ, Ծնդ. ԼԲ. 28:

Յովսէփի գերի բանտարկեալ մըն էր, Փարաւոնին երկրորդը եղաւ, Ծնդ. ԼԹ. 20, ԽԱ. 14, 41-44 Մովսէս մանկիկը գետին մէջ էր, Փարաւոնին աղջիկը առաւ զայն, Ելից. Բ. 3-10:

Յիսու Մովսէսի սպասաւորն էր, Տէրը զինք Մովսէսի տեղ Իսրայէլացւոց առաջնորդ կարգեց Յեռ. Ա. 4-9:

Սամիսոնի հետ էր Տէրը, անկէ գատուեցաւ, Դատ. ԺԶ. 20, 21:

Սամուէլ մանուկը Տէրոջը ձայնը չէր ճանչնար, չորրորդ կանչելուն ճանչցաւ, Ա. Թագ. Գ. 7, 10:

Սաուլը պարզ երիտասարդ մըն էր, Սամուէլ թագաւոր օծեց զայն, Ա. Թագ. ԺԹ. 2, 3, Ժ. 1:

Տէրոջը չոգին Սաուլի հետ էր, մեղանչելովը հեռացաւ իրմէ, Ա. Թագ. ԺԶ. 14:

Գաւթի ոչխարներ կ'արածէր, Սամուէլի օժեղովը Տէրոջը Հոգին իր վրայ եկաւ, Ա. Թագ. ԺԶ. 13:

Աբիսողոմ ջորիի վրայ հեծած էր, բեւեկնիէ մը կախուած մնաց, Բ. Թագ. ԺԲ. 9:

Սողոմոն իմաստուն Աստուծոյ հետ էր, զատուեցաւ՝ օտար չաստուածներ պաշտելով Գ. Թագ. ԺԱ. 1-10:

Սեղանին վրայ ողջակէզը առանց կրակի կը սպասէր, եղիայի աղօթքով Տէրը մէկ կրակ եղաւ զոհին վրայ, Գ. Թագ. ԺԶ. 38:

Արի կինը միայն աման մը իւղ ունէր, Տէրը առատապէս օրհնեց իւղը, Դ. Թագ. Դ. 2-4:

Եղիա եղիսէի հետ խօսակցելով կ'երթար, մորիկով երկինք վերցաւ, Դ. Թագ. Բ. 14:

Սաւնամացի կնոջ մէկ հատիկ աղան մնում էր, ողջնցաւ, Դ. Թագ. Դ. 33-36:

Նէեմիա, Ասորաց զօրագլուխը բորոտ էր, մաքրուեցաւ, Դ. Թագ. Ե. 1, 14:

Գէեզի առողջ էր, բորոտ եղաւ իբրեւ ճեղքի պատիժ, Դ. Թագ. Ե. 26, 27:

Եսթեր իսրայէլացի պարզ աղջիկ մըն էր, վաշթիի տեղ թագուհի եղաւ, Եսթ. Բ. 16, 17:

Յոսիաբուստ էր, զաւակներով, ստացուածքներով, ծառաներով նաեւ առողջութեամբ: Իւրաքանչիւրը կորոնցուց զատ զատ վայրկեաններուն, Յոս. Ա. 1-3, 13-22, Բ. 7, 8:

Յովանն ծուկին փորը կը մնար, ցամաքը հանուեցաւ աղօթքին ի պատասխան Յովն. Ա. 17, Բ. 10:

Երեք երիտասարդներ կրակի հետքին մէջ էին, զուրս ելան անփաս, Դան. Գ. 26, 27:

Պալատին պատը գիր չկար, տեսանելի ձեռք մը պատին վրայ գրեց, Դան. Ե. 3, 25:

Դանիէլ աւիւծներու գութին մէջ էր, զայն զուրս հանեցին, Դան. Զ. 16-23:

Ամովս Թէկուէի հովիւներէն մէկն էր, Տէրը զինք մարգարէ ըլլալու կանչեց, Ամովս. Է. 14:

Յուդայի իշխանը եւ ժողովուրդը Տէրոջը տանը վրայով անհոգ կը գտնուէին, Տէրը անոնց հոգին արթնցուց Անդէ մարգարէին միջոցաւ: Անդ. Ա. 1-14:

Յեսու մեծ քահանան աղտոտ հանգերմներ հագած էր, հանեցին ու պատուական զգեստներ հագցուցին, Զաք. Գ. 3-5:

Վերոյիշեալ վիճակներէն սեւէ մէկուն մէջ որ կը գտնուիս, միայն մէկ վայրկեանի մէջ կատարեալապէս կրնաս փոխուիլ բարիի կամ չարի: Ընտրութիւնը քեզի կը մնայ: Տէրը ամենակարող է եւ Անոր ջերմ փափաքն է քեզ իրենք ընել, նոր մարդ ստեղծել, վեր բարձրացնել, իր փառքին ծառայեցնել: Ի՞նչ է քու փափաքդ:

Բ. Գ. ԵԱՐՏՃՄԵԱՆ

Երբուսողէմ

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՆՈՂ ՃԱՄԲԱՆ

12. ՄԵՐ ԵՐԿՆԱԻՈՐ ՀՕՐ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Մըրացման մէջ քիչ պիտի յառաջդիմէինք, եթէ մեր երկնաւոր Հօր կրթութիւնը չունենայինք: Բայց, երբ իր ճամբաներէն շեղինք ու իր պատուէրները չպահենք, այն ատեն մեր մեղքը ու մեր անօրէնութիւնը՝ զմեզ պիտի գտնէ պատիժներով: Շատեր Հօր կրթութեամբ Երեմիաւի պէս կրնան ըսել, «Ես այն մարդն եմ որ տառապանք տեսայ Անոր բարկութեան գաւազանով»: Ան կը պատժէ զմեզ մեր օգուտին համար, որպէսզի իր սրբութեան հասնինք, ասոր համար Սուրբ Գիրքը կ'ըսէ, «Որդեակ իմ, Տէրը իւրապէս մի անարգեք, ու Անկէ յանդիմանուելով մի թուլնար, վասնզի Տէրը իր սիրածը կը խրատէ, ու կը ձեռնէ ամէն սրդին որ ինքը կ'ընդունի» Եբր. ԺԲ. 5, 6: Երկնաւոր Հօր խրատը ճշմարիտ քրիստոնեայի ապացոյց մըն է թէ ան Ենոր աշխին արժէքաւոր է: Անոնք զիտն թէ խրատուելով կը մաքրուին որպէսզի աւելի պտուղ բերեն: Հայրը շատ մը խրատելու միջոցներ ունի իր գաւազան, երբեմն ամպով կը ծածկէ ինքզինքը որ բնաւ աղօթք մը չկրնար իրեն հասնիլ. երբեմն կ'առաջնորդէ զէպի մթութիւն եւ ոչ թէ զէպի լոյսը. մերթ ճամբուն վրայ փոս կը բանայ որ մեր գնացքը կը զժուարացնէ, դարձեալ անանկ ներքին տապնապի մը կը մատնէ զմեզ որ բնաւ իր գորութեան վրայով բան մը չենք զգար. մերթ կը բռնէ մեր մարմինն ու կը հալուածէ հիւանդութեամբ, կամ կը զրկէ խաչ մը ընտանիքին մէջ, կամ թող կուտայ որ մեր անուան վրայ նախատինք գայ: Աստուծոյ ոչ մի միջոց կը պակսի՝ իր գաւազանը կրթելու եւ խոնարհեցնելու համար: Պէտք է սորվինք մեր Տէրը հասկնալ, «եւ իրաւ ամէն խրատ նոյն ատեն ուրախարար չթուիր, հապա տրամական, բայց ետքը արդարութեան խաղաղարար պտուղը կը հատուցանէ անով վարժուողներուն» Եբր. ԺԲ. 14: Ի վերջոյ կը սորվինք նեղութիւններու մէջ գովել, եւ փորձառու կ'ընէ զմեզ թէ, Աստուած մը ունինք որ գիշերուան մէջ օրհնութիւն երգել կուտայ: Կը պատմուի թէ սոխակը ան ատեն ամենագեղեցիկը կ'երգէ, երբ մութ գիշերուան մէջ խիտ փշամացառի մէջ կը նստի եւ փուշերը իր մարմինը կը վիրաւորին. այսպէս ալ պէտք է ըլլայ մեզի քրիստոնեաներու: Մարդիկ ու կանայք այն ժամուն մէջ զրած են իրենց ամենալաւ երգերը, երբոր նեղութեան ալիքները մինչեւ իրենց հոգիին խորը հասած

են: Ապահով եղիր հաւատացեալ ընթերցող, նեղութիւնները չենք կրնար մերժել, չոր խրատը յօժարութեամբ ընդունելու ենք: Երիտասարդ մը շատ տրտում էր, քանզի ծանր նեղութիւն կրելու պարտաւորուած էր, եւ ի վիճակի չէր իր տարեկիցներուն նման հոս ու հոն վազվառելու եւ ուրախ ըլլալու: Օր մը ժողովի մը գնաց՝ պարզ դիւղացի մը խօսեցաւ Աստուծոյ զաւակներուն կրած նեղութիւններուն վրայ, նմանութեամբ մը ըսաւ որ իր հորթի վզէն փայտէ ցից կամ ձող մը կը կախէ, որպէսզի խենդ ու խելար ոտուկներ չընէ. այս օրինակը իր սրտին դպաւ ու յետոյ յարեց, «Ահա հիմա կը հասկընամ թէ ինչու այս նեղութիւնները կը կրեմ»: Ինքզինքը խոնարհեցուց Ամենակարողի ձեռքին ներքեւ եւ ընդունեց աստուածային օրհնութիւններ: Կը տեսնենք որ նեղութիւնները ոչ թէ մեր լաւութեան՝ այլ մեր պաշտպանութեան համար պէտք են: Բարի Հոգիւր Իմ ձեռքէն պիտի չյափշտակէ դանսնք: Առաքեալը կ'ըսէ, «Աստուծոյ զօրութեամբ պաշտպանուած էք հաւատքով այն փրկութեան համար»: Երբ խնդիրը ասանկ է որպէսզի չկորսուինք, պարտաւոր ենք այն ճամբուն վրայ գտնուիլ որ նեղութիւնները կը ստիպեն մեզ: Պօղոս առաքեալ իրեն համար կ'ըսէ, «Որ չըլլայ թէ ես հպարտանամ իւրստ շատ յայտնութիւններուն համար, ինծի մարմնի խայթոց մը տրուեցաւ, Սատանայի հրեշտակ մը դիտ նեղելու համար, որ չըլլայ թէ հպարտանամ»:

Թարգ. (Վ.Ի.) ՅԱԿՈԲ ԵՂՍԱՋԱՐԵԱՆ
Գաղաղա

ԿԵՆԱՅ ԱՅՈՒՆԵՐԷՆ

ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԿԸ ՍԻՐԵՄՍ

Միսիոնար մը անգամ մը մահամերձ հիւանդի մը մօտ կանչուեցաւ: Ծամբան երկար ըլլալուն՝ ձին հեծաւ եւ քառատրոփ գնաց: Ծամբուն վրայ զոց դուռ մը կար, որուն առջեւ ստիպուած կանգ առաւ: Մարդ մը մօտեցաւ գայն իրեն բանալու:

—Շնորհակալ եմ բարեկամ, ըսաւ միսիոնարը քաղցրութեամբ, յետոյ սիրով անոր նայեցաւ ու ըսաւ,

«Դուն Տէր Յիսուս Քրիստոսը կը սիրե՞ս»:

Մարդը զարմացած երեւոյթով աչքերը վեր

վերցուց բայց ոչինչ չպատասխանեց: Աստուծոյ ծառան աճապարանօք իր ճամբան շարունակեց:

Շատ տարիներ անցան: Կիրակի օր մը բացօթեայ ժողովի մը մէջ նոյն միսիոնարը կը քարոզէր. ժողովի վախճանին անձանօթ մարդ մը անոր հետ առանձին խօսակցելու եղեց:

—Պարոն, ըսաւ ան, ես ձեզի հանդէպ պարտականութեան մը տակ կը գտնուիմ:

—Պարտակա՞ն, ըսաւ զարմացած միսիոնարը. այդ ինչպէս կրնայ ըլլալ, չեմ հասկնար. ես ձեզ չեմ ճանչնար, եւ չեմ յիշեր նոյն իսկ թէ երբեք ձեզ տեսած ըլլամ:

—Պարոն, իմ ձեզի ունեցած պարաքս այնքան մեծ է որ զայն վճարելու կարողութիւն չունիմ, եթէ ոչ միայն երախտագիտութեամբ: Որովհետեւ ձեր միջոցաւ էր որ Յիսուս Քրիստոսը ճանչցայ: Այս այն մարդն էր որմէ տարիներ առաջ միսիոնարը իր ճամբուն վրայ հարցուցած էր, «Դուն Տէր Յիսուս Քրիստոսը կը սիրե՞ս»: Մարդը յայնժամ պատմեց թէ ինք երբեք անկէ առաջ Փրկչին վրայօք չէր լսած. եւ միսիոնարին այս բառերը իր սրտին այնքան զօրաւոր ազդած էին որ որոշեց ամենուն հարցնել թէ ո՞վ էր Յիսուս եւ թէ ինչո՞ւ ինքը պարտէր Տէր Յիսուս Քրիստոսը սիրել: Վերջապէս բարեպաշտ սեւամորթ կին մը տուաւ անոր փափաքած բոլոր բացատրութիւնը: Այն վայրկեանէն նա նոր արարած մը եղաւ, Աստուած ողորմեցաւ եւ անոր մեղքերը ներեց: Եւ նա հիմա կը պատմէր միսիոնարին թէ այն ժամանակէն ի վեր խաղաղութիւն մը եւ երջանկութիւն մը ունէր զոր երբեք չէր ճաշակած Յիսուսը ճանչնալէն եւ սիրելէն առաջ. եւ կ'ըսէր, «Դուք էիք որ ասոր ազբիւրը ցուցուցիք ինծի»:

«Քու հացդ ջուրերուն երեսին վրայ ձգէ, վառընդի շատ օրերէն ետքը զանիկա պիտի դրտնես» ժող. ԺԱ. 1:

«Յարմարութեամբ ըսուած խօսքը արծաթէ զարդերու մէջ դրուած ոսկիէ խնձորներու կը նմանի» Առակ. ԻԵ. 11:

ԵՐԿՈՒ ԱՐԵՒՆԵՐ

Ծաղրածու մը օր մը աստուածաժախ հողագործի մը կ'ըսէր.—

«Աստուածաժախ մարդ մը ինծմէ ինչ առաւելութիւն ունի: Արեւը այսօրուան պէս պայծառ օր մը իր վրայ ծագածին նման իմ վրաս ալ չի՞ ծագիր»:

—Այո՛, պատասխանեց հաւատացեալը, բայց

Աստուծոյ վախցող մարդը զինքը միեւնոյն ժամանակ լուսաւորող երկու արեւներ ունի: Մէկը իր մարմինը կը լուսաւորէ, մինչդեռ միւսը՝ իր հոգին:

«Բայց ձեզի, Իմ անունէս վախցողներուդ Արդարութեան Արեգակը պիտի ծագի, և անոր թեւերուն վրայ բոլորութիւն պիտի ըլլայ» Մատթ. 7. 2:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆԱՊԱՏԻ ԽՈՐԱՆԸ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿ

(Շար. Նախորդ Արեւն Խ. վերջ)

4. Առաջաւորութեան հացի սեղանը — Քրիստոս մեր հացը: (Եւր. Ի. 23-30, Յովհ. 2. 22-29): Առաջաւորութեան հացը (42 նկանակ) ամէն շաբաթ օր սեղանին վրայ կը դրուէր Ահարոնի և իր որդեցը կողմանէ: Սրբաբանին մէջ իր նւագտակին ծառայելէ յետոյ՝ այս հացը քահանաներուն ուտելիքը կ'ըլլար: Ինչպէս որ Ղեւտական դասու քահանաները Աստուծոյ հացովը կը կերակրուէին, այնպէս ալ մենք՝ քրիստոնէայ քահանայական դասը կը կերակրուինք երկնային հացը եղող Քրիստոսով, (Ա. Պետ. Բ. 2-9, Յայտ. Գ. 20, Յովհ. 2. 31, 35, 48, 51, 58): Քրիստոս ցորենի հատիկն էր որ հոգին մէջ ինկաւ և շատ պտուղ բերաւ (Յովհ. ԺԲ. 24-32): Նա մեր տեղ Աստուծոյ բարկութեան կրակը կրեց (Մատ. ԻԷ. 45-50, Ղուկ. ԻԳ. 44-47, Սաղ. ԻԲ. 4-21, Եսայ. ԾԳ. 13, 14), հաւատքով մենք կ'իւրացնենք զԱյն իբր կենաց հացը և Անոր կտրուած մարմինին ու թափուած արիւնին հոգեւոր «խորհուրդ»ը յայտնող արտաքին նշաններով կը կերակրուինք: Նոյնիսկ ամէն օր կը կերակրուինք իր մարմինով ու իր արիւնով առանց արտաքին նշաններու (Կող. Գ. 1-4, Ա. Կոր. ԺԱ. 23-34): Տէրոջը խոստումը յաղթողներուն այս է, «Պահուած մանանայէն ուտել պիտի տամ»: Պահուած մանանան Քրիստոս Ինքն է (Ա. Յովհ. Ե. 4, 3, Յայտ. Բ. 16, 17, ԻԲ. 1-7):

5. Խուսկի սեղանը — Քրիստոս մեր Բարեխօսը (Եւր. Լ. 1-10, Հով. Ը. 26, 27): Սրբաբանին մէջ՝ երկրորդ վարպետներն առջեւ կը կենար խուսկի սեղանը: Ահարոն ամէն օր անոր վրայ Տէրոջը խուսկ կը ծխէր: Հոն օտար կրակ կարելի չէր մատուցանել (Եւր. Լ. 1-10 ԼԷ. 25, Խ. 5): Քրիստոս մեր մեծ Քահանայապետն է որ «միշտ

կենդանի է բարեխօս ըլլալու» (Երբ. Ի. 25, Յայ. Ը. 2-6, Հով. Ը. 26, 27, 34, Ա. Յովհ. Բ. 1, 2): Քրիստոս աշխարհի համար չափօթիւր, հապա մեզի համար (Յովհ. ԺԷ. 9, 15, 20): Ամէն նոր կրտակարանի հաւատացեալ քահանայ առանձնաշնորհում ունի Աստուծոյ օրհնութիւն մատուցանելու (Երբ. ԺԳ. 10, 17, Ա. Պետ. Բ. 3): Քահանայական պաշտօնին դէմ ոտնձգութիւն ընողները և օտար կրակ մատուցանողները խառնութեամբ կը պատժուէին (Թուոց ԺԶ), Կորնի որդիները Աստուծոյ և Մովսէսի դէմ ապստամբեցան, և իրաւունք պահանջեցին որ իրենք ալ Ահարոնեան քահանայութեան կերպով պաշտօնավարեն: Աստուծոյ դատաստանը Իրեն խուսկ ծխող 250 հոգիին վրայ ինկան (Թուոց ԺԶ. 31-35):

6. Քաւութիւնը — (Շնորհաց Աթոռը), Քրիստոս մեր քաւութիւնը (մեր Շնորհաց Աթոռը), Ուխտի տապանակին մէջ երեք բաներ կային. 1. Մանանայով լեցուն սափորը, 2. Աստուծոյ օրէնքը, 3. Ահարոնի զաւագանը: Մանանան կը խօսի Քրիստոսի վրայով իբր կենաց հացը (Յով. 2. 31-35): Օրէնքը սուրբ և արդար՝ Աստուծոյ արդարութեանը վրայ կը խօսի: Այս արդարութիւնը մեր Տէրոջը կողմանէ թէ պահուեցաւ և թէ ջատաղովուեցաւ (Երբ. Ժ. 1-9 Յովհ. Ը. 28, 29 Մատթ. Ե. 17, 18): Նա օրէնքի անէծքին ներքեւ մեռաւ, որպէսզի կարենար մեզ անկէ ազատել (Գաղ. Գ. 13, Գ. 4-6): Ահարոնի ծաղկեալ զաւագանը կը խօսի Քրիստոսի Յարութիւնը և Կեանքը ըլլալուն վրայով (Յովհ. ԺԱ. 25-56, Ա. Կոր. ԺԵ. 20-58): Աստուած Իսրայէլացւոց մեղքերը զանց ըրաւ մինչեւ որ Քրիստոս եկաւ լաւագոյն խոստումներու վրայ ու բուն իր արիւնովը Ինքզինքը պատարագ մատուց իբր Աստուծոյ Գառը (Երբ. ԺԴ. 1-15, Ը. 6): Գողգոթայի խաչին վրայ կատարած իր զոհաբերութեամբ Նա մեր Շնորհաց Աթոռն է (Երբ. Գ. 15, 16): Դարերէն վերջը մէկ անգամ յայտնուելով, իր անձին պատարագովը մեղքը մէկգի ձգեց (Երբ. ԺԴ. 25-28):

7. Մեծ քահանայապետը քաւութեան զգեստներով — Քրիստոս մեր Փրկիչը (Ղեւ. ԺԶ. Յով. ԺԺ.): Քաւութեան օրը՝ Ահարոն իր փառքի ու պատիւի սուրբ զգեստներէն մերկանալով՝ քաւութեան զգեստները կը հագուէր և Սրբութիւն Սրբութեանցը մտնելով մեղքի պատարագին արիւնը ի ձեռին անկէ 7 անգամ Շնորհաց Աթոռին (քաւութեան) առջեւ կը սրսկէր, այսպէսով Իսրայէլացւոց մեղքերուն քաւութիւն ընելով (Երբ. ԺԴ. 1-15): Ղեւտական զոհերը Իսրայէլի մեղքը ծածկեցին մինչեւ Փրկչին գալը (Երբ.

Ժ. 4-18, Հոով. Գ. 24-26): Քրիստոս Աստուծոյ զոհաբերական Գառնուկն էր (Յովհ. Ա. 29), մինչեւ մահուան հնազանդ (Փիլ. Բ. 5-8, Եսայ. ԾԳ. Սաղ ԻԲ.), մեծ Քահանայապետ մը որ մեր տկարու, թիւններուն կարեկից է (Եբր. Դ. 14-16), Իր արիւնովը մէկ անգամ երկինք մտաւ մեզի համար (Եբր. Թ. 12-26 ԺԳ. 12-14), Նոր Ուխտին Միջնորդը (Եբր. ԺԲ. 24):

8. Մեծ քահանայապետը սուրբ զգեստներով պատիւի ու փառքի համար— Քրիստոս մեր Մեծ Քահանայապետը (Ելից ԻԸ. Եբր. Ը.):

ա. Բարակ քթանէ ճերմակ շապիկը— Քրիստոսի անձնական արդարութիւնը (Ելից ԻԸ. 59, Ա. Յովհ. Բ. 1, 2):

բ. Կապոյտ եփուտը զանգակներով եւ նուռերով— Քրիստոսի երկնային նկարագիրը, Անոր վկայութիւնը եւ պաղաքերութիւնը Ելից ԻԸ. 51-55 Յովհ. ԺԵ. 1-8 ԺԶ. 28- ԺԸ. 56-58:

գ. Ոսկիէ, կապուտակէ, ծիրանեգոյնէ ու կրկնակի կարմիրէ եփուտը— Քրիստոս իր քառապատիկ ներկայացման մէջ նկարագրուած Մատ-Մարկ. Ղուկ. եւ Յովհ. Աւետարաններուն մէջ Ելից ԻԸ. 6:

դ. Լանջապանակը— Քրիստոս մեր անունները կրողը Աստուծոյ առջեւ Ղուկ. ԺԲ. 8, Էբր. Թ. 24:

ե. Ուսերուն վրայի մատերը— Քրիստոս հաւատացեալները իր ուսերուն վրայ կրող Ելից ԻԸ. 25, Յովհ. Ժ. 1-5, Ղուկ. ԺԵ. 1-7:

զ. Ուրիմը եւ Թուֆիմը— Քրիստոս լոյս եւ կատարելութիւն Յովհ. Ը. 12, 29, 46, Եբր. Բ. 9, 10, Ե. 9:

է. Խոյրը — Քրիստոս՝ Սրբութիւն Տեառն Եբր. Դ. 15, Է. 26, Ղուկ. Ա. 55:

9. Քրիստոս՝ ինչպէս նա կ'երեւի Անապատի Խորանին մէջ,

ա. Պղնձէ սեղանը— Քրիստոս մեր զոհը Ղեա. Ա. Մատթ. ԻԷ.

բ. Պղնձէ աւազանը— Քրիստոս մեր խօսքը Ելից, Լ. 17-21, Յովհ. ԺԴ. 5-20:

գ. Չուտ սակիւ աշտանակը— Քրիստոս մեր լոյսը Ելից ԻԵ. 51-60, Յովհ. Ը. 12:

դ. Առաջադրութեան հացի սեղանը— Քրիստոս կենաց հացը Ելից ԻԵ. 25-30, Յովհ. Զ. 48-58

ե. Խոնկի սկիզբաւ սեղանը— Քրիստոս մեր Բարեխօսը Ելից Լ. 1-10, Հոով. Լ. 6, 27, 34:

զ. Շնորհաց Աթոռը (քառաթիւնը)— Քրիստոս մեր Շնորհաց Աթոռը կամ քառաթիւնը Ելից ԻԵ. 10-22, Հոով. Դ. 24-26:

է. Խորանը ինքնին— Քի տես մեր մէջ

քնակած Ելից Խ. Յովհ. Ա. 1-14, Ա. Յովհ. Ա. 1-7:

ը. Քահանայապետը— Քրիստոս մեր Քահանայապետը Ելից ԻԸ. Եբր. Է.

«Քանզի Քրիստոս ոչ թէ ձեռագործ սրբարանը մտաւ, որ ճշմարիտին օրինակն է, հապաբուն երկինքը, որպէսզի մեզի համար Աստուծոյ առջեւ ներկայանայ» Եբր. Թ. 24:

Թարգ. Վ. Ս.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՏՈՒՅ ՄՕՆՕ

Մօնօ իր դարձէն(1) կամ ինչպէս ինք կը կոչէ իր «Դամասկոսեան ժամէն» յետոյ գեո առնն մըն ալ Նափուլի դործեց եւ հոն դարձեալ պատեհութիւն ունեցաւ ստէպ զիտելու Վէսուվի հրապառ զագաթը, ծուխի ամպով պոսկուած: Բայց նա առաջուան նման այլեւս իրեն չէր յիշեցներ ծխացող Սինան եւ զինքը չէր սարսափեցներ, հապա իր մտքին առջեւ կը պարզէր Եբր. ԺԲ. 22-24 համարները, «Դուք Սիօն լեռանը մօտեցեր էք, կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմի եւ բիւրաւոր հրեշտակներուն, ու երկինքը զրուած անդրանիկներու հանդիսաւոր ժողովին ու Եկեղեցիին, եւ Աստուծոյ, Որ ամենուն զատաւորն է, ու արդարներուն հոգիներուն որոնք կատարուեր են, եւ Յիսուսի, Որ Նոր Ուխտին միջնորդն է, ու սրսկուելու արիւնին, որ Աբելի արիւնէն աւելի աղէկ կը խօսի»:

Անկէ ետքը իր քարոզները սրտաբուրդի վկայութիւններ էին եւ միայն մէկ մեծ նիւթ ունէին— «Աստուծոյ սէրը»:

Այդ զօրեղ ու ներշնչեալ քարոզները Մօնոյի համբաւը շուտով շատ հեռուները տարին: Ուստի նա 1827ին հրադրուեցաւ Լիօնի տեաւարանական Եկեղեցւոյն մէջ պաշտօնավարելու: Այդ քաղաքը այն օրերուն ալ Յորանսայի ամենէն կարեւոր կեդրոններէն մին էր, զօրաւոր բերդաքաղաք էր, ունէր երկու համալսարաններ եւ շատ ծաղկեալ ճարտարարուեստ: Սակայն անիկա կեդրոնն էր նաեւ ապականութեանց, ամբոց մը խաւարի իշխանութեան, ինչպէս են սկիզբէն ի վեր բոլոր մեծ քաղաքները:

Մօնօ ալ Պօղոս տոռքեալի նման կը խոր-

(1) Տես Բանբերի Հոկտեմբերի Թիւը

հէր թէ մեծ քաղաքները պատերազմական ճակատի առաջին գիծն են. հոն կռուելու է թշնամոյն դէմ եւ անկէ յառաջանալու դէպի փոքր տեղեր: Ուստի ընդունեց հրաւերը եւ սկսաւ իր պաշտօնին հրային եռանդով: Ժողովուրդն ալ ողջագործեց զինքը ամենէն մեծ ուրախութիւնով: Ինչպէս Մօնոյի կենսագիրներէն մին կը գրէ, «Բողոքականներ ու կաթողիկէներ կը խոնուէին իր բեմին առջեւ եւ ընկերութեան ամենէն պատուաւոր ընտանիքները — բայց մանաւանդ անոնց մէջի ամենաեռանդուն քրիստոնեաները — անոր հետ անձնական յարաբերութեան մէջ մտան»:

Սակայն դժբաղդաբար այս ընդհանուր սգուորութիւնը շատ կարճ տևեց: Մօնօ անձամբ այդ մասին գրած է, «Եկեղեցւոյն վարչութիւնը նախապէս ինծի հետ կը վարուէր շատ ընտիր բարեոցակամութեամբ... բայց քիչ ետքը կրցի նշմարել թէ ինչպէս իմ քարոզներս շատերու անհաճոյ դարձան — եւ վարչութեան անդամները իմ մասին վրդովուածի ենթարկուեցան»:

Լիոնի Աւետ. Եկեղեցւոյն ամենէն ազդեցիկ անդամները հարուստ ու պատուաւոր գործարանատէրներ էին, անձնագոհ ու անձնարդար մարդիկ, որոնք մեծ վստահութիւն ունէին իրենց բանականութեան, առաքինութեան եւ բարի գործերուն վրայ: Ուստի չէին կրնար տոկալ որ եւրիտասարդ մարդ մը սուր, կտրուկ խօսքերով իրենց ըսէր թէ քաղքենի պարկեշտութիւնը չի կրնար արդարացնել մարդը Աստուծոյ առջև, հապա մօնէն մարդ ապաշխարելու եւ Քրիստոսի քաւութեան ապաւինելու պէտք ունի:

Քիչ ետքը Մօնոյի հանդէպ փոթորիկը փլուծուեց եւ հետզհետէ սաստկացաւ: 1829ի Զատիկին Մօնօ քարոզած էր նիւթ ունենալով «կրնա՞ս խաղաղութեամբ մեռնիլ»: Այդ քարոզը շիդերուն դպաւ այն անձնարդար մարդոց, որոնց փափաքն էր Մօնոյի մէջ տեսնել ո՛չ թէ ապաշխարութիւն քարոզող կրակոտ աւետարանիչ մը, հապա ճարտասան, հետաքրքրական բանախօս մը: Ուստի ուզեցին զայն հեռացնել իրենց Եկեղեցիէն: Մօնօ այդ մասին հետեւեալը գրած է:

«Իմ ուժասպառ աշխատանքս ցնցած էր իմ առողջութիւնս, եւ զիս մղած ինծի օգնական քարոզիչ մը խնդրելու: Շատերու, մանաւանդ վարչութեանս ղեկավարութիւնը զրգոյցած էր իմ գատկըւն քարոզը, որուն միջոցաւ եւ ժողովուրդին մօտին մէջ զրօշմած էի թէ չկրնար խաղաղութեամբ մեռնիլ ոեւէ անձ, որ իրացուցած չէ Քրիստոսի արեան միջոցաւ կտտարում քառու-

թիւնը: Քանզի երբ անկէ քիչ ետք վարչութեան նիստին մէջ առաջարկեցի որ ինծի տային իմ ուզած քարոզիչս, մերժեցին իմ խնդրքս այն դիտողութեամբ թէ քնաւ չպիտի վաւերացնէին պաշտօնավարութիւնը կրօնականի մը իմ հաւատաքիս ուղղութիւնը ունեցող:

«Սախալում էի առանձին մնալ: Մայիս 17ին քարոզեցի Հոով. Զ. 4 ին վրայ եւ փորձեցի ապացոյցանել թէ հաւատքը չանտեսեք բարի գործերը: Ընդհակառակը անկարելի է կտտարել մէկ բարի գործ իսկ, եթէ մարդ չհաւատայ Քրիստոսի ձրի շնորհքին: Այս քարոզը իր նախընթացէն աւելի դժգոհութիւն գրգռեց»:

Այդ զրգոյթիւնը առիթ տուաւ վարչութեան զրկել Մօնոյի քանի մը անձեր եւ անոնց միջոցաւ յայտնել անոր թէ իր քարոզչութեան եւ պաշտօնավարութեան ուղղութիւնը փոխելու էր, ասկէ ետքը այնպէս քարոզելու եւ գործելու էր իբր թէ չէր հաւատար այն արդարութեան որ հաւատքով է:

Մօնօ մերժեց այդ առաջարկը: Ասոր վրայ վարչութիւնը իր նիստին մէջ վճռեց թէ անոր պաշտօնավարութիւնը եկեղեցւոյն կը փախչի և խնդրեց անկէ որ իր հրաժարականը մասուցանէր: Մօնօ տեղի չտուաւ, և անոնց յայտարարեց թէ անոնք զինքը կրնային հրաժարելու համազել ու ստիպել միայն այն ատեն, երբ իր վրայ պարտադանցութեան յանցանք գտնէին, եւ թէ ինք պատրաստ էր տեղի տալ ոեւէ բանաւոր պահպանի առջեւ, բայց չէր կրնար ուշադրութիւն ընել անտեղի բողոքներուն:

Այն ատեն Ֆրանսայի մէջ եկեղեցին պետական էր. եկեղեցիներու վարչութիւնները չէին կարող իրենց ուզած ատեն հրաժարեցնել իրենց պաշտօնեան: Կղերականներու պաշտօնանկութիւնն ալ կառավարութեան ձեռքով կ'ըլլար եւ միայն եկեղեցական օրէնքներու դէմ գործուած յանցանք մը կրնար զայն աշղլիսի քալի մը մղել: Արդ՝ Մօնօ այդպիսի յանցանք մը չունէր: Ուստի կրցաւ իր պաշտօնին վրայ մնալ ատեն մըն ալ, սրբան ալ որ իր վարչութիւնը հակառակ էր իրեն:

Բնականաբար այս վիճակը իրեն մեծ վիշտ կը պատճառէր, սակայն անիկա վստահ էր թէ Աստուծոյ կամքին համաձայն էր որ ինքը զեռատեն մըն ալ Լիոն մնար, քանզի այդ դժուարութիւններուն հակառակ Տէրը կ'օրհնէր իր գործը: Կ'արժէ հաս մէջ բերել ուղղակի իր խօսքերը:

«Այս է իմ ներկայ վիճակս, տխուր, բայց

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԱՍԵՐ 1934 ՏԱՐԻՈՅ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Աղօթք ընթերցումէ առաջ.

«Բաց իմ աչքերս, որպէս զի քու օրէնքէդ հրաշքներ տեսնեմ:»

Սաղ. ձԺԲ. 18:

ՅՈՒՆՈՒՆ	ՓԵՏՏՈՒՄ	ՄԱՐՏ	ԱՊՐԷԼ	ՄԱՅԻՍ	ՅՈՒՆԻՍ	ՅՈՒԼԻՍ	ՕԿՏՈՍԱՍ	ՍԵՊՏԵՄԲԵՐ	ՀՈԿՏԵՄԲԵՐ	ՆՈՅԵՄԲԵՐ	ԴԵԿՏԵՄԲԵՐ
Սաղմոս	Մատթէոս	Մատթէոս	Մատթէոս	Նէեմեայ	ԳործքԱռաքել.	Գ. Առաքել.	Եսթեր	Յովհաննէս	Յովհաննէս	2 Ժողովողի	Սաղմոս
1 ձԺԱ. 1-8	1 Ե. 17-26	1 ժԶ. 13-28	1 ԿԺԸ. 1-10	1 Ը. 1-2	1 Թ. 1-16	1 ԺԺԸ. 18-28	1 Զ. 1-14	1 Ը. 1-2	1 Թ. 1-16	1 ԺԺԸ. 1-12	1 ձԺԳ. 1-15
2 ձԺԲ. 1-9	2 Ե. 33-48	2 ժԺ. 1-13	2 ԿԺԸ. 1-10	2 Ը. 8-18	2 Թ. 17-31	2 ԺԺԸ. 1-12	2 Զ. 1-14	2 Ը. 8-18	2 Թ. 17-31	2 ԺԺԸ. 1-14	2 Գործքացիս
3 ձԺԳ. 1-5	3 Զ. 1-18	3 ժԺ. 14-27	3 ԿԺԸ. 1-10	3 Ը. 1-17	3 Թ. 1-17	3 ԺԺԸ. 13-27	3 Զ. 1-17	3 Ը. 1-17	3 Թ. 1-17	3 ԺԺԸ. 15-25	2 Գ. 1-8
4 ձԺԴ. 1-5	4 Զ. 19-34	4 ժԺ. 1-14	4 ԿԺԸ. 1-10	4 Ը. 1-11	4 Թ. 1-11	4 ԺԺԸ. 1-12	4 Զ. 1-11	4 Ը. 1-11	4 Թ. 1-11	4 ԺԺԸ. 10-21	3 Գ. 9-20
5 ձԺԵ. 1-8	5 Զ. 1-14	5 ժԺ. 1-14	5 ԿԺԸ. 1-10	5 Ը. 1-14	5 Թ. 1-14	5 ԺԺԸ. 1-14	5 Զ. 1-14	5 Ը. 1-14	5 Թ. 1-14	5 ԺԺԸ. 1-12	4 Գ. 1-17
6 ձԺԶ. 1-21	6 Զ. 15-29	6 ժԺ. 1-16	6 ԿԺԸ. 1-10	6 Ը. 1-16	6 Թ. 1-16	6 ԺԺԸ. 1-16	6 Զ. 1-16	6 Ը. 1-16	6 Թ. 1-16	6 ԺԺԸ. 1-12	5 Գ. 18-29
7 Մատթէոս	7 Ը. 1-17	7 ԺԺ. 17-34	7 ԿԺԸ. 1-10	7 Ը. 1-17	7 Թ. 1-17	7 ԺԺԸ. 1-17	7 Զ. 1-17	7 Ը. 1-17	7 Թ. 1-17	7 ԺԺԸ. 1-12	6 Գ. 1-13
8 ժԺ. 1-14	8 Ը. 18-34	8 ԺԺ. 1-17	8 ԿԺԸ. 1-10	8 Ը. 18-34	8 Թ. 18-34	8 ԺԺԸ. 1-18	8 Զ. 1-18	8 Ը. 18-34	8 Թ. 18-34	8 ԺԺԸ. 1-12	7 Գ. 14-22
9 ժԱ. 15-25	9 Թ. 1-17	9 ԺԺ. 1-17	9 ԿԺԸ. 1-10	9 Ը. 1-17	9 Թ. 1-17	9 ԺԺԸ. 1-17	9 Զ. 1-17	9 Ը. 1-17	9 Թ. 1-17	9 ԺԺԸ. 1-12	8 Գ. 1-11
10 ժԲ. 1-22	10 Թ. 18-34	10 ԺԺ. 18-34	10 ԿԺԸ. 1-10	10 Ը. 1-22	10 Թ. 18-34	10 ԺԺԸ. 1-22	10 Զ. 1-22	10 Ը. 1-22	10 Թ. 18-34	10 ԺԺԸ. 1-12	9 Գ. 1-14
11 ժԲ. 23-40	11 Թ. 35-38	11 ԺԺ. 23-40	11 ԿԺԸ. 1-10	11 Ը. 23-40	11 Թ. 35-38	11 ԺԺԸ. 23-40	11 Զ. 23-40	11 Ը. 23-40	11 Թ. 35-38	11 ԺԺԸ. 1-12	10 Գ. 1-17
12 ժԳ. 1-14	12 Ժ. 1-15	12 ԺԺ. 1-15	12 ԿԺԸ. 1-10	12 Ը. 1-14	12 Ժ. 1-15	12 ԺԺԸ. 1-14	12 Զ. 1-14	12 Ը. 1-14	12 Ժ. 1-15	12 ԺԺԸ. 1-12	11 Գ. 1-8
13 ժԴ. 8-17	13 Ժ. 16-31	13 ԺԺ. 16-31	13 ԿԺԸ. 1-10	13 Ը. 8-17	13 Ժ. 16-31	13 ԺԺԸ. 8-17	13 Զ. 8-17	13 Ը. 8-17	13 Ժ. 16-31	13 ԺԺԸ. 1-12	12 Գ. 1-9
14 ժԵ. 25-29	14 Ժ. 32-42	14 ԺԺ. 32-42	14 ԿԺԸ. 1-10	14 Ը. 25-29	14 Ժ. 32-42	14 ԺԺԸ. 25-29	14 Զ. 25-29	14 Ը. 25-29	14 Ժ. 32-42	14 ԺԺԸ. 1-12	13 Գ. 1-10
15 ժԶ. 1-6	15 Ժ. 20-30	15 ԺԺ. 20-30	15 ԿԺԸ. 1-10	15 Ը. 1-6	15 Ժ. 20-30	15 ԺԺԸ. 1-6	15 Զ. 1-6	15 Ը. 1-6	15 Ժ. 20-30	15 ԺԺԸ. 1-12	14 Գ. 1-11
16 ժԷ. 7-27	16 Ժ. 1-21	16 ԺԺ. 1-21	16 ԿԺԸ. 1-10	16 Ը. 7-27	16 Ժ. 1-21	16 ԺԺԸ. 7-27	16 Զ. 7-27	16 Ը. 7-27	16 Ժ. 1-21	16 ԺԺԸ. 1-12	15 Գ. 1-12
17 ժԸ. 28-43	17 Ժ. 22-37	17 ԺԺ. 22-37	17 ԿԺԸ. 1-10	17 Ը. 28-43	17 Ժ. 22-37	17 ԺԺԸ. 28-43	17 Զ. 28-43	17 Ը. 28-43	17 Ժ. 22-37	17 ԺԺԸ. 1-12	16 Գ. 1-13
18 ժԹ. 1-15	18 Ժ. 15-31	18 ԺԺ. 15-31	18 ԿԺԸ. 1-10	18 Ը. 1-15	18 Ժ. 15-31	18 ԺԺԸ. 1-15	18 Զ. 1-15	18 Ը. 1-15	18 Ժ. 15-31	18 ԺԺԸ. 1-12	17 Գ. 1-14
19 ժԺ. 16-27	19 Ժ. 32-51	19 ԺԺ. 32-51	19 ԿԺԸ. 1-10	19 Ը. 16-27	19 Ժ. 32-51	19 ԺԺԸ. 16-27	19 Զ. 16-27	19 Ը. 16-27	19 Ժ. 32-51	19 ԺԺԸ. 1-12	18 Գ. 1-15
20 ժԱ. 1-14	20 Ժ. 1-13	20 ԺԺ. 1-13	20 ԿԺԸ. 1-10	20 Ը. 1-14	20 Ժ. 1-13	20 ԺԺԸ. 1-14	20 Զ. 1-14	20 Ը. 1-14	20 Ժ. 1-13	20 ԺԺԸ. 1-12	19 Գ. 1-16
21 ժԱ. 15-30	21 Ժ. 14-30	21 ԺԺ. 14-30	21 ԿԺԸ. 1-10	21 Ը. 15-30	21 Ժ. 14-30	21 ԺԺԸ. 15-30	21 Զ. 15-30	21 Ը. 15-30	21 Ժ. 14-30	21 ԺԺԸ. 1-12	20 Գ. 1-17
22 ժԲ. 1-16	22 Ժ. 31-46	22 ԺԺ. 31-46	22 ԿԺԸ. 1-10	22 Ը. 1-16	22 Ժ. 31-46	22 ԺԺԸ. 1-16	22 Զ. 1-16	22 Ը. 1-16	22 Ժ. 31-46	22 ԺԺԸ. 1-12	21 Գ. 1-18
23 ժԲ. 17-32	23 Ժ. 1-16	23 ԺԺ. 1-16	23 ԿԺԸ. 1-10	23 Ը. 17-32	23 Ժ. 1-16	23 ԺԺԸ. 17-32	23 Զ. 1-16	23 Ը. 17-32	23 Ժ. 1-16	23 ԺԺԸ. 1-12	22 Գ. 1-19
24 ժԳ. 1-11	24 Ժ. 17-32	24 ԺԺ. 17-32	24 ԿԺԸ. 1-10	24 Ը. 1-11	24 Ժ. 17-32	24 ԺԺԸ. 1-11	24 Զ. 1-11	24 Ը. 1-11	24 Ժ. 17-32	24 ԺԺԸ. 1-12	23 Գ. 1-20
25 ժԴ. 1-12	25 Ժ. 17-32	25 ԺԺ. 17-32	25 ԿԺԸ. 1-10	25 Ը. 1-12	25 Ժ. 17-32	25 ԺԺԸ. 1-12	25 Զ. 1-12	25 Ը. 1-12	25 Ժ. 17-32	25 ԺԺԸ. 1-12	24 Գ. 1-21
26 ժԵ. 1-13	26 Ժ. 17-32	26 ԺԺ. 17-32	26 ԿԺԸ. 1-10	26 Ը. 1-13	26 Ժ. 17-32	26 ԺԺԸ. 1-13	26 Զ. 1-13	26 Ը. 1-13	26 Ժ. 17-32	26 ԺԺԸ. 1-12	25 Գ. 1-22
27 ժԶ. 1-14	27 Ժ. 17-32	27 ԺԺ. 17-32	27 ԿԺԸ. 1-10	27 Ը. 1-14	27 Ժ. 17-32	27 ԺԺԸ. 1-14	27 Զ. 1-14	27 Ը. 1-14	27 Ժ. 17-32	27 ԺԺԸ. 1-12	26 Գ. 1-23
28 ժԷ. 1-15	28 Ժ. 17-32	28 ԺԺ. 17-32	28 ԿԺԸ. 1-10	28 Ը. 1-15	28 Ժ. 17-32	28 ԺԺԸ. 1-15	28 Զ. 1-15	28 Ը. 1-15	28 Ժ. 17-32	28 ԺԺԸ. 1-12	27 Գ. 1-24
29 ժԸ. 1-16	29 Ժ. 17-32	29 ԺԺ. 17-32	29 ԿԺԸ. 1-10	29 Ը. 1-16	29 Ժ. 17-32	29 ԺԺԸ. 1-16	29 Զ. 1-16	29 Ը. 1-16	29 Ժ. 17-32	29 ԺԺԸ. 1-12	28 Գ. 1-25
30 ժԹ. 1-17	30 Ժ. 17-32	30 ԺԺ. 17-32	30 ԿԺԸ. 1-10	30 Ը. 1-17	30 Ժ. 17-32	30 ԺԺԸ. 1-17	30 Զ. 1-17	30 Ը. 1-17	30 Ժ. 17-32	30 ԺԺԸ. 1-12	29 Գ. 1-26
31 ժԱ. 1-18	31 Ժ. 17-32	31 ԺԺ. 17-32	31 ԿԺԸ. 1-10	31 Ը. 1-18	31 Ժ. 17-32	31 ԺԺԸ. 1-18	31 Զ. 1-18	31 Ը. 1-18	31 Ժ. 17-32	31 ԺԺԸ. 1-12	30 Գ. 1-27

Սր. Գրոց Միութիւնը կապակցութիւն ունի շատ եկեղեցիներու, Սր. Գրոց ուսանողներու, դպրոցներու եւ գլխեմներու հետ, եւ մեծերու թէ փոքրերու արդիւնաւոր սատար մը եղած է Սր. Գիրքը օրէ օր կարողալու եւ խորհրդածութեան առարկայ ընելու համար:

Սր. Գրոց Միութեան իրր 6,000 հիւղեր կան Մեծ Բրիտանիոյ մէջ: Եւրոպայի մէջ խոշոր հիւղեր կան — Ֆրանսա, Իտալիա, Ճանիմարա, Սքանտինաւիա, Հոլանտա, եւլն: Ասիոյ մէջ — Հնդկաստան, Զինաստան, Ճափոն, Գորէա: Աւստրալիոյ մէջ — Նոր Հարաւային Ուէլլս, Վիքթորիա, Բաւմանիա, Նոր Զելանտա: Ամերիկայի մէջ — Քանատա, Միացեալ Նահանգներ, Պրագիլ, Արճէնթին, եւլն: Ափրիկէի մէջ — Հիւսիսսիին, Հարաւային, Արեւելեան, Արեւմտեան եւ Կեդրոնական Ափրիկէ ու բոլոր Կղզիները:

Ս Գրոց Միութիւնը կը գործէ անհատներու եւ ազգերու լաւագոյն շահերուն համար: Մեծ ծառայութիւն կը մատուցանէ ապագային՝ նորահաս սերունդին դիւրեմկալ միտքերուն վրայ տպաւորելով Սր. Գրոց սկզբունքները, որոնցմէ կախեալ է ճշմարիտ յաջողութիւնը:

Ամէն որ կրնայ անդամակցիլ Սր. Գրոց Միութեան, բայց անոնք միայն մասնակցելու են որոնք իրապէս կը բաղձան կանոնաւորապէս ու աղօթքով կարողալ որոշուած մասերը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Մասնանիւղ

ԱՆԴԱՄԻ ՔԱՐՏ

ԱՆԴԱՄԻՆ ԱՆՈՒՆԸ

Ընդունուած

Ստորագրուած

ՃԻՒԴԻՆ
ՊԱՏՈՒԱԿԱԼ
ՔԱՐՏՈՒԴԱՐԸ

«Մանկութենէդ ի վեր Սուրբ Գիրքերը գիտես. որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով: Բ Տիմ. Գ. 15:

Քարտուղար Սուրբ Գրոց Միութեան
J. H. HUBBARD

3 & 5 WIGMORE ST., LONDON W. 1

1934

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Սր. Գրոց Միութեան, որ 1879ին կազմուեցաւ, նպատակն է զարկ տալ Սր. Գիրքը կանոնաւորապէս ամէն օր կարդալու շարժման:

Որդեգրուած մեթոտն է Սր. Գիրքը ծայրէ ծայր կարդալ հինգ տարուան ընթացքի մը մէջ: Ամէն տարի ամբողջովին կը կարդացուին Աւետարաններուն երկուքը եւ առարեալներու թուղթերուն երկու երեքը: Որչափ կարելի է, Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի գիրքերը փոփոխակի կը կարդացուին, Սաղմոսներն ալ մերթ ընդ մերթ միւս գիրքերուն միջեւ: Առօրեայ ընթերցումները միջին հաշուով տասներորս համար են եւ մասնաւոր կերպով կը յարմարին դեռահասներու եւ զործի մարդոց պէտքերուն:

Սր. Գրոց Միութիւնը Աղօթքի Միութիւն է միանգամայն: Անդամներն ամէն կիրակի առաւօտ կ'աղօթեն իրարու համար:

Սր. Գրոց Միութիւնը տարածուած է ամէն տեղ եւ ունի 850,000 անդամ: Սր. Գրոց տարեկան ընթերցումներուն ցանկը կը հրատարակուի 50 տարբեր լեզուներով:

Այս Միութեան անդամակցելու համար անհրաժեշտ է ձեր անունը դրել տեղային քարտուղարի մը, որ ձեզի կու տայ անդամակցութեան քարտ մը առօրեայ ընթերցումներու ցանկը պարունակող: Այդ քարտերը կը նորոգուին տարուէ տարի:

միեւնոյն ատեն երջանիկ, քանզի նոյնիսկ ընդ-
դիմութիւնը կ'ապացուցանէ ինծի թէ Աստուծոյ
օգնութեամբ ես իմ մատու անդոյս եկեղեցւոյն
վերջին վրայ դրած եմ, կ'ապացուցանէ նաեւ
թէ Լիոնի եկեղեցին բոլորովին մեռած չէ, հա-
պա հոն նոր կեանքի շարժումը կայ: Հիմնական
դարձ ունեցած են շատ մը մարդիկ- որոնցմէ ո-
մանք իմ ծառայութեանս միջոցաւ, ինչպէս ես
կը յուսամ: Մենք հաղորդութիւն ունինք լուրջ,
փորձառու քրիստոնեաներու հետ եւ առատ օրհ-
նութիւններ կը սպասենք երկինքէն: Տէրոջը
ձեռքը կրնայ չարիքը բարիքի վերածել... Գա-
լով իմ անձիս, ես ինքնիրենս կը հարցնեմ յա-
ճախ, ինչպէ՞ս եղաւ որ ես ալսպիսի գրգռում մը
յառաջ բերի. արդեօք ասոր մէջ ես սեւէ յաւն-
ցանք ունի՞մ»: Ապա այս սրտաբուլի ազօթքը
կ'ուղղէր դէպի վեր:—

«Ով իմ Աստուծոյ ու Փրկիչս, չեմ յուսահա-
տիր. կը յիշեմ ամէն ինչ որ դուն ինծի բրած
ես ուրիշ պարագաներու տակ, եւ ես Քեզի կ'ա-
պաւինիմ: Շնորհակալ եմ որ Դուն իմ հաւատ-
քըս կը փորձես. կը փառաբանեմ զՔեզ որ Դուն
ինծի կը թաւաարես, կիրակի վկայել Քու ճշ-
մարտութեանդ նկատմամբ: Քու Որդւոյդ Յիսուս Քրիստոսի անուանը համար
թոյլ տուր ինծի այս քարոզի միջոցաւ միայն
Քու պատիւը փնտել եւ օգնէ ինծի շնորհքովդ
զայն գտնելու»:

Այս մարտնչունները տեսցին դեռ քանի մը
տարի ալ եւ Քրիստոսի այս առիւծասիրտ վկան
մնաց իր պատնէշին վրայ՝ կոտի ամբողջ տե-
ւողութեանը, միշտ վայելիւով Աստուծոյ օգնու-
թիւնը:

Վերջապէս 1852ին, դարնան, վճիռը տրուած
էր եւ Մօնօ ստիպուած էր հեռանալ Լիոնի Աւե-
տարանական եկեղեցւոյ բնէն. եւ ասոր պատ-
ճառը հետեւեալն էր:—

Մօնոյի համար ամենէն մեծ խղճահարութիւ-
նը կը պատճառէր Սուրբ Հաղորդութեան հան-
դէպ մարդոց անլուրջ, անարժան վերաբերումը:
Մանաւանդ տօնական օրերուն Տէրոջ սեղանին
շուրջ կը խոնուէին անոնք մեծ բազմութեամբ՝
առանց ուշադրութիւն ընելու թէ իրենք սրտով
կէս հեթանոսներ էին դեռ: Մօնօ իրեն տրամադ-
րելի ամէն միջոցներով կը գղութացնէր զանոնք
որպէսզի «անարժանաբար» չմասնակցին Տէրու-
նական բնթրիքին: Անգամ մը իր խօսքերը կը
վերջացնէր այսպէս, «Ա՛խ, ի՞նչ սոսկալի շփո-
թութիւն, ի՞նչ անպատուութիւն Յիսուս Քրիստո-
սի մարմնոյն եւ արեան: Արդեօք իմ Փրկիչիս

սեղանը միշտ այսպէս պիտի սրբապղծուի: Յա-
ւէտ պիտի ուղէի Քրիստոսի մարմինը քարի մը
վրայ դնել եւ Անոր արիւնը հովերուն յանձնել,
քան թէ անսուրբ եւ անհաւատ բերնի մը մա-
տուցանել: Ով Աստուծոյ, վերցուր Քու եկեղեցի-
էդ այս գայթակղութեան քարը, քանզի ասիկա
կատարեալ անկարգութիւն է, մերկապարանոց
անհաւատութիւն է, անհաւատութիւն մը որ
ինքզինքը Քրիստոսի անուան տակ կը ծածկէ»:

Այս խօսքերը բնականաբար շատ վրդովեցին
վարչութիւնը: Տեղի տուին երկար բանակցու-
թեանց: Բայց եօթը շաբաթ ետքը, Մօնօ կը
զտնուէր դարձեալ նոյն դժուարութեան առ-
ջեւ: Պէտէկոստէի շաբաթ օրուան իրիկունը ա-
նիկա նշանակեց իր օրագրութեանը մէջ, «Աստ-
ուծ իմ, Դուն գիտես թէ ես այս տիրոջ խառ-
նաշփոթութեան մէջ Հպիտի կրնամ կիրակի օր
Սուրբ Հաղորդութիւն մատակարարել: Շնորհա-
կալ եմ որ Դուն դիս այս մասին լուսաւորեցիր,
ս'հ, ցուցուր հիմա ինծի թէ ինչպէ՞ս կատարելու
եմ Քու հրամաններդ: Ով Տէր, ինծի յստակօրէն
ճանչցուր Քու կամքդ»:

Մօնօ ջանաց հաղորդութեան հարցը այնպէս
կարգադրել որ մէկ կողմէն ինքը խղճահարու-
թիւն չունենար, իսկ միւս կողմէն եկեղեցական
կանոնին դէմ չզործէր. փնտոնց պատուելի մը
որ յօժար ըլլար իր տեղ հաղորդութեան սուրբ
խորհուրդը կատարելու, բայց ի զո՛ւր: Պէտէ-
կոստէի կիրակին բեմ ելաւ տօգոյն դէմքով եւ
սովորականէն աւելի խոռոված: Բարոյեց, ու քա-
րոզէն ետքը անմիջապէս հեռացաւ եկեղեցիէն՝
հաղորդութիւն առնելու համար սպասող ժողո-
վուրդը նստած ձգելով:

Այս լաւ պատրուակ մըն էր հակառակորդ-
ներու ձեռքին մէջ: Անոնք խսկոյն ամբաստա-
նեցին զինքը կառավարութեան մօտ պարտա-
զանցութեան յանցանքով եւ Մօնոյի պաշտօ-
նանկութիւնը ինչորեցին: Կառավարութիւնը ըն-
թացք տուաւ: Թշնամիները յաղթած էին:

Մօնօ քաշուեցաւ եկեղեցիէն, բայց հանդարտ
ու խաղաղ սրտով: Այդ առթիւ ինքը այսպէս
արտայայտուած է, «Որքա՛ն ողբալի է կառավա-
րութիւնը իր բնարած ուղղութեանը համար. սա-
կայն որքա՛ն մեծ են դժուարութիւնները զորս
նա նկատողութեան առնել ստիպուած է: Մենք
կ'ուզենք զայն պատուել եւ ողօթել անոր հա-
մար: Թերեւս օրը պիտի դայ, երբ անիկա պի-
տի ճանչնայ թէ որոնք են իր ճշմարիտ բարե-
կամները, անո՛նք, որոնց ինքը իրաւունք կուտայ՝
թէ անոնք զորս ինքը այսօր կը մերժէ: Ինչ որ

ալ ըլլայ զրուած է թէ, «Ամէն բաները բարիի դարձակից կ'ըլլան անոնց, որոնք գնահատուած կը սիրեն», բայց շնորհէ Աստուած որ այդպէս պատահի ոչ թէ միայն անոնց (զԱստուած սիրողներուն), հապա անոնց, որոնք այսօր կոյր զործիքներ են մեծ թշնամիին (Սատանային) ձեռքին մէջ»:

X X X

ՂԱԶԱՐՈՍ ԵՂՐԱՅՐ ՄԱՐՈՒԹԵԱՆ

Այո, Ով Հայր, ինչու որ Գու աւջեւդ ասանկ հաճելի եղաւ: Մատթ. ԺԱ. 26

Այս վերջին օրերս, դառն ցաւով տեղեկացանք «Մարանաթա»յի նոյեմբերի թիւով, շատերու ծանօթ եւ սիրելի Ղազարոս եղբայր Մարութեանի կսկծալի սպաննութիւնը որ պատահած է Պէյրութի գիւղերէն Ղազիրի մէջ:

Ղազարոս եղբայր, որբանոցի ջուրը խանգարող դրացի աղջկան մը հօրը քաղցրութեամբ կը խօսի, արգիլել իր զաւակը որ չխաղայ ջուրի խողովակին հետ եւ հոն այդ ջրաղբիւռ ու մտային հիւանդութեամբ վարակուած մարդուն կողմէն խիստ կատաղի խօսքեր լսելէն յետոյ յանկարծակի կը դնդակահարուի, առանց դրգապատճառ մը տալու:

Յիսուսի շատ տխրազգեցիկ է, երբ աչքի առջեւ կուենեանք սպաննութեան պարագաները եւ ոչինչ պատճառները, որոնց զոհ գացեր է մեր եղբայրը, ու երբ կը յիշենք այն բոլոր փրկութիւնները զոր Տէրը գործած էր Ղազարոսին համար իր գինաց օրերուն մէջ, տկամայ շփոթութեան կը մատնուինք, ու պատահարը անհաղկունալի կը դառնայ մեզի:

Ներկայիս կը փափաքիմ Ղազարոսէն կենսագրական դիժ մը տալ իր բոլոր սիրելիներուն ու ծանօթներուն, եւ փառաւորել Տէրը, որ իր զարմանալի ու անիմանալի ճամբաներովը առաջնորդեց անոր եւ իր յաւիտենական ծրագրին հասցոյց գայն: Աստուած Քրիստոսով Ղազարոսը ընտրեց, եւ իր շնորհքովը կանչեց, արդարապէս եւ փառաւորեց գայն իր փառքին մէջ առնելով. փառք ըլլայ Անոր յաւիտեան:

Ղազարոս Գ. Մարութեան ծնած է Վանի մէջ 489Յի ատենները: Իր պատանեկութեան տարիներուն կը մանկ Վանի Գերման որբանոցը, ուր աղաւ պատահեցաւ կ'ունենայ ուսմամբ պատանի, եւ շնորհիւ իր ժրջան ու անխոնջ

ջանքերուն, կարճ ժամանակուան մէջ շատ յաջող կ'աւարտէ Վանի Գերմանահայ վարժարանը:

Գերման միսիոնարներ, ուսման ծարաւովը տաշորուող այս երիտասարդը ուրիշ քանի մը ընկերներու հետ կը զրկեն Խարբերդ, հետեւելու համար Մէլքի Գերմանահայ սեմինարի դասընթացներուն: մօտ երկու տարի ուսանելէ վերջ, վրայ կը հասնի համաշխարհային պատերազմը, որ յեղաշրջեց նաեւ իր ապագան:

Պատերազմի տարիներուն, Ղազարոս 7 տարի մանկանց ու պատանիներու ուսուցչութեան պաշտօնը կը վարէ նոյն հաստատութեանը մէջ, միեւնոյն ժամանակ ջանքով եւ ինքնաշխատութեամբ կը տիրանայ անգլիարէն, ֆրանսերէն ու գերմաներէն լեզուներուն եւ ուրիշ դիտութիւններու:

1922ին մահու վտանգներէն եւ նեղութիւններու հալոցի մը մէջէն անցնելէ վերջը, փախուստական կ'անցնի Սուրիա, եւ տարիի մը չափ Հալէպ կենալէ վերջը, կաթոլիկ հաստատութեան մը կողմէ ուսուցչութեան պաշտօնով կը հրաւիրուի Ապէյ (Պէյրութի մօտ), սակայն զաղափարի տարակարծութեանց հետեւանքով տարի մը վերջը կը ձգէ հաստատութիւնը եւ Պէյրութ կ'երթայ՝ Հայաստան երթալու եւ իր մօրը քով հանգչելու նպատակաւ: Պէյրութի մէջ բուռն փափաքով կ'աշխատի Հայաստանի համար անցադիր մը ձեռք ձգել, բայց Հյաջուդիւր իր բոլոր ջանքերը ապարդիւն կը Գնան, եւ ինք իր այս անգործ ու նիւթապէս նեղուած վիճակին մէջ Ֆիգիքապէս շատ կը տկարանայ:

1926ին Ֆրանսա կ'անցնի, հոգեւոր շրջանակին մէջ գործելու համար, բայց իր ֆիզիքական տկարութիւններուն պատճառաւ անկարող կ'ըլլայ սեւէ գործ մը գործելու: Տը. Պէրրոն, մեզի հայերու շատ սիրելի բարեկամը, Աստուծոյ տընօրէնութեամբ կը հանդիպի իրեն, կը տեսնէ իր տկար ֆիզիքականը եւ մեծ դժուարութիւններէ վերջը կը յաջողի տեղափոխել գինքը Ալգաւի մէջ կառավարական լաւ հիւանդանոց մը, կազմուրութիւն եւ իր հիւանդութիւններէն բուժուելու համար: Երկու տարի հոն կենալէ վերջ Ղազարոս նորէն Պէյրութ կը վերադառնայ կառավարութեան հրամանով:

Ղազարոս Պէյրութ հասնելով շատ կ'ուրախանայ Տէրը զարմանալի առաջնորդութիւններուն վրայ, եւ իբր կենդանի զոհ մը, նոր ու յաւիտենական ուխտով, իր անձը կ'ընծայէ Տէրը, եւ երկրորդ անգամ մկրտուելով եւ Տէրը ջով եղբայրներ: Եւ հետ միմանալով, կը վկայէ Յիսուսի

համար ամէն տեղի, ամէն վայրի մէջ: Ղազարոս իր տկար ֆիզիքականով Տէրոջը շնորհքովը աւելի շատ կը գործէ Տէրոջը համար, պատմելով ու վկայութիւն տալով Տէր Յիսուսի սիրոյն վրայ, մեծի ու պզտիկի, զինուորականի ու հասարակութեան, թէ՛ հրապարակներու վրայ, շուկաներու, թրամվէյներու եւ թէ՛ տուներու մէջ, եւ այսպէս իր յաւիտենական փառքը զարգարեց: Փառք ըլլայ Տէրոջը որ Իր զօրութիւնը տկարութեան մէջ կը յայտնէ:

1952 Դեկտեմբերին, Ղազարոս կը հրաւիրուի Ղազիր, Զուիցերիական կուրանոցին մէջ գործելու եւ թարգմանութիւններ ընելու. մօտ տասը ամիս հաւատարմաբար ծառայելէ եւ իր վայրին մէջ աղ ու լոյս ըլլալէ վերջ, օր մըն ալ Տէրոջը յօժարութեամբը չարին մէկ գնդակին հանդիպելով, Ղազարոսին երկրաւոր ու հոգեղէն տունը կը փլի: Ղազիրի մէջ կը վերջանայ հաւատքի եւ յոյսի կենաց պայքարը, ու նա կ'անցնի յաւիտենականութեան, իր անձեռագործ ու յաւիտենական տան մէջ բնակելու, նահատակ հոգիներու ու բիւրաւոր սուրբերուն հետ իր սիրելի ու փառաւորեալ Տէրոջը խորին, հզօր, վսեմ, բեղուն սէրը երգելու:

Մեր սիրելի եղբօր այս կենսագրականով, մենք որոշապէս կրնանք տեսնել երկնաւոր Հօր առաջնորդող բազուկը, որ Իր անհասկնալի խորհուրդներովը ու անիմանալի ճամբաներովը առաջնորդեց անոր, կենաց պայքարին մէջ, եւ հասցուց զայն այն յաւիտենական նպատակակէտին, որուն համար ստեղծած էր Ա. թեո. և. 9:

Մենք որ իբր օտարներ ու պանդուխտներ կ'ապրինք այս երկրի վրայ, պիտի հանդիպինք պարագաներու որոնք մեզի անհասկնալի պիտի մնան, ինչպէս մեր սիրելի եղբօր այս դժբաղդ պատահարը. սակայն անոնք խոչընդոտներ ըլլալու չեն մեր հաւատքի կեանքին ընթացքը կեցնելու: Մենք հաւատքով եւ վստահութեամբ բնորոշուելու ենք որ Տէրը ինչ որ կ'ընէ հիմա չենք իմանար. բայց վերջը պիտի իմանանք: Բայց այս պարագայով կրնանք խորատուիլ Տէրոջմէն աւելի արթուն ու զգաստ եւ մեր կոչումին գիտակից կեանք մը ապրելու: Մենք այս ճամբայով միայն պիտի կրնանք մեր Տէրոջը փառքին մէջ աւելնալ, ու նաեւ մեր սիրելի եղբօրը Ղազարոսին բարի յիշատակը անմոռանալի ընել (Սաղ. ծԺԲ. 6):

Կը բազմամ որ Տէրը օրհնութիւն մը ընէ այս պարագան մեզի, որ մենք մզոյնք աւելի բզ-գաստութեամբ գործելու եւ աւելնալու Տէրոջը

փառքին համար, աւելի նորոգուած ու զօրացած հասնինք այն վիճակին, որով կարող պիտի ըլլանք մեր սիրելի Փրկիչը դիմաւորելու եւ հոն տեսնելու նաեւ մեր սիրելիները, որոնք արեւներ հագած են փառքով եւ անոնց հետ փառաւորենք Տէրը յաւիտեանս: Ո՛հ, այն փառքին վազենք:

«Եւ երկինքէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Գրէ, Այսուհետեւ երանելի են այն մեռելները, որոնք Տէրոջմով կը ննջեն. այո, կ'ըսէ Հոգին, որ հանդի-չին իրենց աշխատութենէն, եւ իրենց գործերը իրենց ետեւէն կ'երթան» (Յայտ. ԺԴ. 13):

Քրիստոսով իր ու ձեր եղբայրը
Գ. ՊԱՐՍՍԱՄԵԱՆ

Մարտէյլ

ՊԱՍՏԱՆԵԱՅ

ԾՆՈՒՆԴ

Հո՛ւռ, ականջ դիր... ս՛րկից այս երգն սրբա-
ղաշնակ ու վրսեմ...

Գիշերային համապարփակ մթնութեան մէջ

անվրդով

Ո՞վ են, եւ ո՛ւր, բիւրեղաձայն խմբերգուները,
կ'ըսեմ,

Աստուածային այս համերգին, հըրաշալո՛ւր,
հոգեթո՛վ:

Հո՛ւռ, Ծնունդի սուրբ գիշեր է, տօ՛նն է խո-
րին Խորհուրդին.

Հո՛ւն, այրին մէջ Բեթլեհեմի, անփառունակ

ու խոնարհ,

Այսօր ծընաւ մի նոր Արքայ. Աստուած մի՛ակ

Իր Որդին

Որպէս մանուկ հեզ, հրաշածին, Փրկիչ զրկեց
այս աշխարհ

Յո՛ւշ, վահաշուք խմբերգն է այդ՝ երկնից
զօրաց օրհնարան,

Երկիր իջած սէրովբէից ու հրեշտակաց

մշտաթոն,

Մեծ աւետիսն է՝ խոովահար հովիւներուն

պահապան՝

«Երկրիս վրայ խաղաղութիւն ու մարդոց մէջ

հաճութիւն,

«Փրկիչ ծնաւ ձեզի այսօր» — Աշխարհն հա-
մայն իմոյ ցնձա՛յ,

Բեթլեհեմի մըսին առջեւ թող ամէն ծունկ

իջնէ ցած,

Թող ամէն սիրտ նըւիրուի՝ արդ — կենդանի
զոհ, սուրբ ընծայ,
Այդ նորածին քաղցրիկ Մանկան, այդ Աս-
տուծոյն մարդացած:

Նա Մեսիա՛ն է կանխատեսուած, խաղաղու-
թեան վեհ Իշխան,
Օծեալ Տէ՛ր է, մեղաց քաւի՛չ, նեղեալներուն
ապաստան,
Սքանչելի՛, Խորհրդակի՛ց, Հօգը Աստուած
յաւիտեան.
ԶԱյն ընդունողն ա՛լ չի տեսներ, ո՛չ ատեան,
ո՛չ զատաստան:

Թող ցնծութեան մեղեդիներ հնչեցնէ եր-
կիրն արդ,
Ու ձայնակցի դաշն հաճերպին հրեշտակնե-
րուն զըւարթուն,
Զի փրկութեան համար մարդուն, Աստուածոր-
դին եղաւ մարդ:
Բարձրութեանց Աստուծոյ փա՛ռք, պատի՛ւ
եւ միշտ գովութիւն:
Մարտէյլ Զ. ՔԻՒՐԲՃԵԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԼԱԿԱԳՈՅՆ ԾՆՈՒՆԻԸ

(Նմանողաբար)

Տիկին էմըրսըն, իր ամուսնոյն մահէն վերջ
բժիշկներու թելադրութեամբը ձգած էր Անգլիա՝
եւ իր երեք պզտիկներուն ու լեհ աղախինին
հետ եկած հաստատուած էր Յունաստան՝ Քոր-
ֆուի գեղածիժաղ կղզեակին մէջ: Ագրիականի
կապոյտ ջուրերուն մէջ ուսման է Քորֆուն
մշտադաւար ու գեղեցիկ:

Հոգ, այդ դրախտային անկիւնին մէջ, քաղա-
քէն քիչ մը հեռու, նարնջենիներով ծածկուած
վիլլայի մը մէջ կ'ապրէր Տիկ. էմըրսըն: Միշտ
մոռլ ու տխուր բան մը կար անոր անքիժ
դէմքին վրայ: Ինչո՞ւ. ոչ ոք գիտէր, միայն աս
չափը յարանի էր որ՝ այդ կինը՝ հոգեւոր մեծ
անկում մը կրած էր: Իր երջանկաբուլիս հա-
ւաքին հետ կորսնցուցած էր նաեւ ամէն յոյս
եւ մխիթարութիւն, ներքին խաղաղութեան հետ
խուսափած էին նաեւ կեանքի զօռաւորութիւն-
ներուն տոկալու իր գաղտնի ուժը եւ աչքերուն
ժպիտը: Դարձած էր լուռ, մարդաստեաց, մենասէր:

Երեք տարուայ ընթացքին երբ Քորֆու կը

գտնուէր, ոչ մէկ յարարերութիւն մշակած էր
մօտակայ գրացիներուն հետ, ոչ մէկ մասնակ-
ցութիւն անոնց սովորութիւններուն կամ տօնա-
կատարութեանց: Կ'ապրէր բոլորովին կղզիացած
ինչ որ գուցէ իր կեանքը աւելի կը զսոնացնէր:

Կը սիրէր միայն բնութիւնը, եւ իր միակ հա-
ճոյքի պահերն էին արեւամուտի գրաւիչ պա-
հերը, երբ սովորութիւն ըրած էր ամէն օր դուրս
գալ իր երեք պզտիկներուն եւ աղախինին հետ
ծովեզերքի քարափին վրայ շրջագայելու: Վեր-
ջալոյսի յարափոփախ գրաւչութիւնը արտասո-
վոր ուրախութիւն կը պատճառէին իրեն եւ զա-
ւակներուն: Կը սիրէին ժամերով դիտել երկին-
քի անսահման կապոյտը, ծովը եւ ձկնորսներուն
ձիւնի պէս ճերմակ առազատտանսերը:

Դեկ. 24ի իրիկուն մըն էր: Իրիկնամուտի պա-
հուն պզտիկներէն մէկը գլխարկն ու վերարկուն
վերցնելով դէպի մայրը վազեց պոտալով, «Մայր,
մայր, այսօր որքա՛ն ուշացած ենք պոտլոյսի
ժամէն, նայէ, ալ գրեթէ արեւ չ'մնաց»:

—Բայց դուն որքան անհամբեր ես ձօրհ, կը
տեսնես որ Մարգարիտին կառքը կը պատրաս-
տեմ որ անմիջապէս դուրս ելլենք:

Մարգարիտ՝ երեք պզտիկներուն միջակը,
ծանր հիւանդութենէ մը վերջ անդամալուծուած
12 տարու աղջնակ մըն էր, որուն շոալուած
սէրն ու գուրգուրանքը դայն շփացուցած եւ չա-
փազանց անձնասէր դարձուցած էին:

—Երթանք, հրամայեց մայրը, ու բոլորը մի-
ասին դուրս ելան:

Երբ շուկայէն կ'անցնէին, փողոցներուն մէջ
ժողովուրդին արտասովոր իրարանցումը, մա-
նուկներուն խանդավառութիւնը ու մանաւանդ
ցուցափեղկերուն հարուստ ու պէսպիսի խաղա-
լիքները եւ զարդարանքը պզտիկներուն ուշադ-
րութիւնը գրաւեց, ու մինչ մայրերնին լո՛ւռ,
ինքնիր մէջ խորասուզուած կը քալէր, պզտիկ-
ները սկսան հետաքրքրութեամբ հարցնել աղա-
խինին, ժաքլի՛ն, ինչո՞ւ համար այս իրիկուն
այսքան շատ ժողովուրդ կայ փողոցները եւ
խանութները զարդարուած են ծաղիկներով ու
խաղալիքներով:

Աղախինը որ հոգեւոր աղջիկ մըն էր, սկսաւ
պատմել անոնց մէկ երկու հազար տարի առաջ
այս մեր խեղճ երկրագունդին վրայ տեղի ունե-
ցած այն մեծ դէպքը՝ որուն մենք Ծնունդ ա-
նունը կոտանք այսօր: Եւ Յովհ. Գ. 16ը նախա-
բան ընելով, պատմեց անոնց թէ ինչպէս Հայր

Աստուծոյ կողմէն Յիսուսի ծնողք ըլլալու որոշուած Յովսէփն ու Մարիամը այնքան ազգասէրն որ Բեթլեհեմի մէջ տեղ չգտան բնակելու և ստիպուած եղան դորձածութենէ զադրած, աղտոտ, մութ ու ցուրտ գոմի մը մէջ անցնել զիշերը... Թէ ինչպէս այդ զիշեր Աստուծոյ Որդին Յիսուս Փրկիչը աշխարհ եկաւ... Թէ ինչպէս այդ անշուք ախոռը երկնային պալատի մը պէս լուսաւոր եւ գեղեցիկ դարձաւ երբ լուսազգեստ հըրեշտակներ եկան հոն երկնային երգեր երգելու: Պատմեց նաեւ մեծ հրեշտակէ մը աւետիս առնող հովիւներուն այցելութիւնը, ու դեռ գիտաւոր փայլուն Աստուծոյ մը առաջնորդութեամբ՝ իմաստուն մտքերուն երկար ճամբորդութիւնը, անոնց խոնարհ երկրպագութիւնը եւ նուէրները...

Պատկերները այնքա՛ն յափշտակուած էին այս հրաշալի եւ ճշմարիտ պատմութիւնով՝ որ երբեք նշմարած չէին թէ արդէն շատանց շուկայէն հեռացած եւ ձկնորսներու մութ ու ամայի փողոցը եկած են: Անոնք դեռ կը շարունակէին հարցաւորձել ժաբլիքը Յիսուսի վրայ, հրեշտակներուն եւ այն մեծ աստղին վրայ, հովիւներուն եւ մոգերուն վրայ... ու երբ ժաբլիքը կը պատասխանէր անոնց հետաքրքիր հարցերուն եւ կը յորդորէր զանոնք սրիւղ Յիսուսը ու իրենց պրոֆատիկ սրտերը բանալ Անոր, որ պառկելու համար ուրիշ տեղ չտեսցաւ, բայց միայն մտորմը...: Յանկարծ Կորքին, մեծ եղբայրին, անզգուշութեամբ դպաւ իր առջեւ քաշուած չուանի մը որուն վրայէն վար ինկան քանի մը լաթի կտորներ: Երբ ծուցաւ վերցնելու, տեսաւ որ շատ հին, պատռուած վերարկուի մը հետ աղտոտ, իւզոտ զլխարկ մըն էր որ ինկած էին խնամքով պատին տակ գետեղուած զոյգ մը ծակձկած հնամաշ կօշիկներու վրայ:

— Ի՛նչ թշուառութիւն... նայէ՛ ժաբլիքն նայէ՛ բացազանչեց Կորքին, ցոյց տալով վերարկուն, զլխարկը եւ մոճակները:

— Խեղճ ձկնորսներ... աւելցուց ձօրճ, յուշուած ձայնով մը, անշուշտ Յիսուս ալ անոնց պէս ազգասէր էր, չէ՞, ժաբլիքն:

— Անշուշտ, ածապարեց Կորքին, բայց չէ՞ որ հովիւներուն եւ մոգերուն բնձաները հարստացուցին Յիսուսը:

— Որքա՛ն ճիշդ եւ Կորքի, որքա՛ն ճիշդ, ըսաւ աղախինը, բայց ո՞վ պիտի հարստացնէ կամ արախացնէ այս աղքատ ձկնորսները: Տեսէ՛ք Կորքի, ձօրճ, տեսէ՛ք, այս խեղճուկ պատիկները, աւանդական առասպելներէ խաբուած տեղացի բոլոր պատիկներու սովորութեանը պէս՝

իրենք ալ ի՛նչ մեծ յոյսերով ու ակնկալութեամբ դուրս դրած են իրենց փրթթած կօշիկները, վերարկուն եւ զլխարկը, որպէսզի ուշ զիշերին երբ ամէն մարդ կը քնանայ, մեր պատմած մոգերուն բարի թոռնիկները, որ մենք Կաղանդ պապա կը կոչենք, գան եւ զանոնք անուշեղէններով եւ խաղալիքներով լեցնեն: Խեղճ խաբուած որբուկներ, հարուստ պատիկներու ծնողքները իրենք կը լեցնեն իրենց պաւակներուն դուրս դրուած կօշիկները, բայց այս թշուառ ձագուկներուն ո՞վ պիտի ողորմի...:

— Ես, ես, աղաղակեց ձօրճ, դէպի մօրը վազելով: Կորքին ալ անոր հետեւեցաւ, ու երկուքը մէկ սկսան թախաճանօք քանի մը տրախմի խնդրել այդ պատիկներուն դուրս դրուած մոճակները անուշեղէններով լեցնելու համար:

— Դէ՛, որդողեցաւ մայրը, ձեր ի՛նչ պէտքն է ձկնորսներուն լաճերը, Աստուծո՛վ թող հոգայ զանոնք, հեղնեց դառնութեամբ:

Բայց... բայց... կրկնեց Կորքին, առանց կարկնալ շարունակելու, եւ ձօրճին հետ յամառեցան կենալ իրենց դրաւած տեղը: Բայց երբ Տիկ. Էմբրսըն կ'ուզէր անտարբերութեամբ իր ճամբան շարունակել աղջնակին կառքը քշելով, ձօրճ սկսաւ պօռալ անոր ետեւէն, «Ես տուն կ'երթամ իմ զանձանակիս դրամը ծախսելու: Ես ալ, ես ալ աւելցուց Կորքին:

— Ի՛նչ կ'ուզէք բռնք, եղաւ քարսիրտ մօրը պատասխանը:

— Բու գանձանակէդ ալ քիչ մը դրամ առնէ՛ք Մարգարիտ, պօռաց Կորքին իր պատիկքերը ետեւէն:

— Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Մարգարիտ անբռնական անձնասիրութեամբ մը, իմ գանձանակիս չգալիք, չե՛մ ուզեր, չէ՛...

— Անգութ, անձնասէր, պօռացին տղաքը, եւ վազեցին տուն: Հասան: Ուրախութեամբ պարպեցին իրենց գանձանակները եւ արագ շուկայ իջան աղախինին հետ: (Մնացեալը յաջորդիւ)

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ

(Թ. ՏԱՐԻ 1933)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Բանբեր / Բնականութիւն	էջ 177
Մանկանց կիրակնօրեայ դպրոցը	161
Մանուկները եւ հաւատադէպ ծնողքը	115
Մեր խօսքերն ու գրութիւնները	129
Յովել մարդարէէն մեղի...	145
Նոր տարուան սեմէն ներս	1

Պէնտէկոստէի երգը	81	Դիւրագրգիռ	153
Փրկչին Ծնունդը	178	Երեք ամենէն կարեւոր բաները	74
Քրիստոսի յարութեան ապացոյցները	49, 66	Երիտասարդ... հոգեվարք... յուսահատ...	122
Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիները	17, 55 97	Երկու արեւներ	183
ՀՈԳԵԻՈՐ ԿԵՍՆՔ		Զարմանալի սփռագործ մը	168
Ամանոր	5	Ինչպէ՞ս կ'ազօթես	90
Անհաւատութիւն եւ բնական լոյսը	85	Լէթիմըր	152
Աստուծոյ որդիները	164	Ծածկուած «Անով»	72
Աստուծոյ տանող ճամբան	54, 71, 87, 105, 119, 137, 151, 167, 182	Հուսյթփիլա	153
Աւագ Ուրբաթի խորհրդածութիւն	52	Յիսուսի նաչինք	89
Բարի զինուորին, «Սպասում»	85	Նահատակներ	122
Դառնութիւն	24	Ո՛ւր կ'երթաս	89
Եղիշէ Եկինեան	101	Տէր Յիսուս Քրիստոսը կը սիրէ՞ս	183
Ես եմ	70	Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ	
Զոհս	85	Աստուածաշունչը	25, 40, 72, 106, 123
Ընտանիքը (այլը)	44	Յովհաննէս Առաքեալ	107, 140, 171
Ինչպէ՞ս կրելու է վիշապ	83	Ո՛րն է Ս. Գրոց մեծագոյն զուլիւրը	174
Լուսափայլ աչքեր	54	Պետրոս Առաքեալ	27, 57
Խորհրդածութիւն	25	ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ	
Խայթոցը որ չվերցուեցաւ	156	Անապատի խորանը	170, 184
Կորսուած ուրախութիւնը...	179	Լեզուին մեղքերը	153
Համբարձումն Քրիստոսի	87	Յովհ. Ա. զլխուն մէջ...	90
Հանգուցեալ Տիկ. Եսթեր Հայտնութեան	37	ԿԵՆՍՍՏԱՆԻՆ	
Հեռաւոր տեսարանը եւ յաջորդ քայլը	147	Ատուլի Մօնօ	142, 155, 185
Հոգեկան ախտեր	149, 166	Կոմս Յինցէնտորֆ	15, 42, 60, 75, 92, 109
Հպարտութիւն	99, 118, 155	Ղազարոս եղբայր Մարութեան	188
Մարիամ եւ Մարթա	22	ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ	
Մեղքերու թողութիւն	7	Երկու եղբայրներու պատմութիւնը	175
Մեր յանձնառութիւնը	9	Եւա եւ հայրիկը	47
Մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը	56	Իրապէս մեծը	50
Մէկգի հին հանգերձը	105	Լաւագոյն Ծնունդը	190
Միայն վայրկեան մը առաջ	181	Լու է Աստուծոյ հնազանդիլ	46
Յուերժացման պայմանը	24	Կաղանդի նուէրը	15
Յիսուս ամբաստանուած	68	Հառկաքաղ	95, 126, 144, 157, 176
Սուրբ Հոգիին օրհնութեան աճումը	51, 56	Հարցումներ Դանիէլի Գիրքէն	31
Ս. Հոգին ի՞նչ կերպով կը յայտնուի	5, 20, 35	Հարցումներ Ելից Գիրքէն	64
Սուրբ Հոգիով մկրտութիւնը	116, 151	Մանկանց ու կաթնկեր տղայոց բերնէն	78
Տարեւիցի խոհուսներ	6	Մառիի բարեկամները	77
Տէրը անապատ	149	Յիսուսի սէրը	62
Քու «Հայր մեր»դ	103	Ո՛հ, որքա՛ն մեծ համբերութիւն	112
Օտար ափունքէ	11	ՊԱՏԱՆԵԱՑ	
ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ		Ես աղօթք ընել չեմ զիտեր	79
Աղօթք եւ գործ	89	Ծնունդ	189
Աստուծոյ գործին համար դրամ	169	ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒԲԵՐ	16, 32, 48, 64
Աստուծոյ վստահիլ	152		79, 96, 128, 159
Աւագակապետի մը դարձը	169		
Բողոքական բայց ոչ քրիստոնեայ	158		
Դէմ առ դէմ	121		

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St. Savournin - Marseille

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարաժաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papere.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դըպ-
րոց մանկանց 11 Rue Jde l'Eclipse
Շարաժաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն Ժիւլիէնի, Սէնժ Լանուանի, Սէնժ Մարկրի-
թի, Սէն Ժէրոմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

ՍԷՆՔ ԻՐԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԹԱ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պազգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,
Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափագեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷԹ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ. Բոֆ. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ.— Հովիւ' Պատ. Ի. Պարտաւեան,
78 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:
15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆՔ ԷՔԻԷՆ.—Քարոզիչ Պրն. Ի. Արքաժամեան
2. Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.
17ին աղօթածողով
Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՋ.— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 20
Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournesfort Paris 50
Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

ընտանեացիներ եւ ուսումնասիրութիւնը:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-
դութեան Քրիստոնէական Միութիւն

ընտանեացիներ եւ ուսումնասիրութիւնը:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սբ. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար
Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով
59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulineaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville
ժամը 14ին կիր. դաս

ՄԵՐ ՔՈՎ ՊԱՏՐԱՍԾ ԿԱՆ ՄԻՇՏ

Ա) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Բարի Հովիւր
2. Դուռը զարնող Փրկիչը
3. Յիսուս հովն ու ծովը կը հանդարտեցնէ
4. Մարիամ եւ Մարթա
(մեծութիւն՝ 37 սմմ. երկ. եւ 27 սմմ. լայն)
Գին՝ 5 ֆր. ձեռքէ, 6 ֆր. թղթ. ծախքով
5. Ճաշը կոյսերը
(մեծութիւն՝ 29 սմմ. երկ. եւ 26 սմմ. լայն)
Գին՝ 4 ֆր. ձեռքէ, 5 ֆր. թղթ. ծախքով
6. Լայն եւ նեղ ճամբան.
(մեծութիւն՝ 63 սմմ. երկ. 50 սմմ. լայն)
Գին՝ 6 ֆր. ձեռքէ, թղթ. ծախքով 7

Բ) ՊԱՏԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

որոնց խրաքանչիւրին վրայ կայ հետեւեալ համարներէն մին՝ Յովն. Գ. 16, Գործ. Գ. 12, Փիլ. 7, 8, Ա. Յովն. Գ. 10:
(մեծութիւն՝ 16 սմմ. երկ. 11 սմմ. լայն)
Գին՝ մէկ ֆր. Թղթատարական ապսպրանքը 25էն պա-
կաս ըլլալու չէ:

Գ) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՔԱՐԳԵՐ

1. Մննդեան քարգեր, (ծաղկանկար կամ պատկեր մը Փրկ-
չին մանկութեան կեանքէն, իրեն յարմար Սր. Գրական
ոսկեղէն համարով մը օժտուած)
2. Նոր տարուան քարգեր, (ծաղկանկարի մը վրայ Նոր
տարուան բարեմաղթութեան հետ նաեւ Ս. Գրական յար-
մար ոսկեղէն համար մը):
3. Զատիկուան քարգեր, (ծաղկանկար, Զատիկուան բարե-

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postal'ն է
H. N. Ghazarossian, 182, 53 Marseille.

Բոլոր ապսպրանքները կանխիկ ըլլալու են:
.....

մաղթութեան հետ նաեւ օրուան յարմար Սր. Գրական
ոսկեղէն համար:

Դ) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ՓՐԿՁԻՆ ԿԵԱՆՔԷՆ (քարգի ձեռով)

Գին՝ տուգէնը ձեռքէ վեց ֆրանք, Թղթատարական ապս-
պրանքներ 25էն պակաս ըլլալու չեն:

Ե) 12 տեսակ գեղեցիկ ծաղկաւոր խաչեր, Ս. Գրական
խօսքով մը.— Միայն Յիսուս, Իմ շնորհքս հերիք է քեզի
Քեզ յաւիտենական սիրով սիրեցի, Մինչեւ ի մահ հաւա-
տարիմ եղիր, Զանքի մէջ Թուղստիւտ չլլաք, եւայն:

Գին խրաքանչիւրը 50 սանթ, կամ 3 սէնթ:

Թղթատարով ապսպրանքներ 25 էն պակաս ըլլալու չեն:

Զ) ՊԱՏԻ ԾԱՂԿԵՊԱՏԿԵՐՆԵՐ

ա. Զորս տեսակ: Մեծութիւն՝ 27 սմմ. երկ. 20 սմմ. լայն
Վրայի Ս. Գրական համարներն են, 1) Յեսուայ ԻԳ. 15. 2)
Գառ. Ե. 22, 23. 3) Կող. Գ. 4, 4) Ա. Կորնթ. ԺԵ. 57:

բ. Երկու տեսակ ձուածեւ. ծաղկեպատկերներ: Մեծութիւնը
27 սմմ. երկ. 16 սմմ. լայն: Վրայի Ս. Գրական համար-
ներն են, 1) Ա. Յովն. Ա. 7. 2) Յայտ. Բ. 10:

Գին՝ խրաքանչիւրը 3 ֆր. թղթ. ծախքով 3, 50:

գ) Երկու պատկերներ: Մեծութիւն՝ 33 սմմ. երկ. 23 սմմ.
լայն:

1) Մեր քաղաքականութիւնը. Սր. Գրական համարներ.
Փիլ. Գ. 20 եւ Երբ. ԺԳ. 13, 14: Եւմ Հորս տունը վերն հո-
գալս քնակարանն էրգով:

2) Ապաստող ծառան: Նոյն մեծութեամբ: Սր. Գրական հա-
մար՝ Դուկ. ԺԲ. 36: Ե՛ի՛մ առ դէ՛մ Փրկիչ Տէրօջս հեա՛ն
երգով:

Գին՝ խրաքանչիւրը 4 ֆր. թղթ. ծախքով 4, 50

ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐԴԵՐԸ ՓՈԽԹՈՎ ԱՊՍՊՐԵՑԷՔ.

Rédaction du "PANPÈRE"
7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & Cie
39, Rue St.-Savournin - MARSEILLE